Azg

Azg armenian daily

19 ՄԱՐՏ 1997 ՇՈՐԵՔՇԱԲԹԻ # 51 (1305)

Եռյակը Ղարաբաղի հակամարտությունը ուզում է լուծել Լիսաբոնի դեղատոմսով

18 ՄԱՐՏ, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ»: Ինչպես նախատեսված էր, մարտի 17-ին Փարիզում բացվեց ԵԱՀԿ-ի եռյակ համանախագահության ժողովը: Այն հավանաբար կբարունակվի մինչեւ վաղը եւ նպատակ ունի ընդունելու Ղարաբաղի հակամարտության լուծման բանակցությունների նոր փուլի ծրագիրն ու ժամանակացույցը: Արդեն որոշված է, որ եռյակ համանախագահության հաջորդ ժողովը տեղի կունենա Մոսկվայում, ապրիլ ամսին, Ադրբեջանի, Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչների մասնակցությամբ: Փարիզի ժողովում քննարկվում են եռյակ նախագահության նոր պայմաններում Մինսկի խմբի շրջանակներում բանակցություններ վարելու կարգին առնչվող խնդիրներ եւ այլ ընթացիկ հարցեր: Փորձ է արվում նաեւ տեսնել, թե ինչպես կարելի է մեղմացնել հակամարտության կողմերի դիրքորոշումները եւ Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը լուծում գտնել այն սկզբունքներով, որոնք հաստատել է ԵԱՀԿ-ի վերջին, Լիսաբոնի գագաթաժողովը: Փարիզի այս ժողովը, ըստ էության, Մինսկի խմբի նոր համանախագահների առաջին գործնական հանդիպումն է նրանց նշանակումից ի վեր եւ, փաստորեն, սկիզբ է դնում ղարաբաղյան բանակցությունների նոր փուլին:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

Ուկրաինայի դեսպանն այցելեց ՀՈՒԱԿ գրասենյակ

Մարտի 18-ին Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցության Հանրապետական վարչության գրասենյակում տեղի ունեցավ հանդիպում Հայաստանի Հանրապետությունում Ուկրաինայի Հանրապետության դեսպան Ալեքսանդր Բոժկոյի եւ ՀՈՒԱԿ Հանրապետական վարչության ատենապետ Հարություն Կարապետյանի միջեւ՝ վարչության անդամների մասնակցությամբ:

Զրույցի ընթացքում երկուստեք ընդգծվեց հայ-ուկրաինական տնտեսական-մշակութային վաղեմի կապերի զարգացման անհրաժեշտությունը եւ հեռանկարները երկու երկրների անկախ պետականության պայմաններում:

Դեսպանը մասնավորապես ներկայացրեց Ուկրաինայում առկա սոցիալ-տնտեսական եւ քաղաքական իրավիճակը, դրանց զարգացման միտումները: Նա առանձնահատուկ նշեց Ուկրաինայում հայկական համայնքների եւ պետական կառույցների, ինչպես նաեւ ուկրաինական բնակչության փոխհարաբերությունները, ընդգծելով հայերի դրական դերը իր երկրի կյանքում:

Իր հերթին ՀՈՒԱԿ ատենապետն անդրադառնալով շոշափված խնդիրներին, հավաստիացրեց, որ ՀՈՒԱԿ-ը մշտապես պատրաստ է նպաստել երկու երկրների միջեւ փոխհարաբերությունների հետագա զարգացմանը:

Լեւոն Մարաբյանը ընդդեմ «Վաշինգտոն թայմսի» խմբագրականի

18 ՄԱՐՏ, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ»: Մարտի սկզբին «Վաշինգտոն թայմս» օրաթերթն իր խմբագրականում կոչ էր արել ԱՄՆ-ի փոխպետքարտուղար Սթրոբ Թալբոթին Լեռնային Ղարաբաղի հարցի այնպիսի լուծում գտնել, որը մի կողմից հաշվի կառնի հայերի ինքնակառավարման իրավունքը, մյուս կողմից՝ կաղախովի Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը: Երեկ, նույն «Վաշինգտոն թայմսը» տպագրել է Գլենդելի քոլեջի պրոֆեսոր Լեւոն Մարաբյանի արձագանքը այդ խմբագրականին: Պրոֆեսորը շեշտում է, որ եթե Լեռնային Ղարաբաղին ինքնավարության կարգավիճակ շնորհվի Ադրբեջանի կազմում, ապա այնտեղ տարիներով կպահպանվեն ներքին առճակատումը եւ արտաքին միջամտության վտանգը: Պատմական փորձը վկայում է, նշում է Լեւոն Մարաբյանը, որ Ադրբեջանի իշխանության ներքո հայերի գոյատեւումը վտանգված է, իսկ 2 ժողովուրդների հակամարտությունը Ռուսաստանի համար տարածաշրջանի գործերին միջամտելու հետագա հնարավորություն կստեղծի:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Ում հրահանգով է Ադրբեջանը ստանում ռուսական ինքնաթիռներ

ՎԱՀԲԱՏ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Ինչպես հայտնի է, հայկական բանակին ռուսական սպառազինության մատակարարելու վերաբերյալ հարցմանն ի պատասխան ՌԴ պաշտպանության նախարար Ռոդիոնովը օրերս պաշտոնապես հայտարարել է, որ Հայաստանին «ռազմական տեխնիկան հանձնվել է առանց ՌԴ կառավարության համաձայնության որոշումների»:

Ուշագրավ է սակայն մեկ հանգամանք, որը չգիտես ինչու գիտակցաբար, թե դիտավորյալ կերպով վրիպում է ՌԴ նախարարի տեսադաշտից: Մարտի սկզբներին արված ՀՀ ԱԳՆ հատուկ հայտարարության մեջ ընդգծվում է, որ Ադրբեջանը շուտով պատրաստվում է ստանալ երս 8 ՄՈՒ-24 ինքնաթիռ եւ ինքնաթիռային 18 շարժիչ, ինչպես նաեւ «Ուրագան» հրթիռակայանի հրթիռներ: Բացի այդ, արժանահավատ աղբյուրների հաղորդմամբ «վերջին մի քանի տարում գնել է 12 ՄԻԳ-21, 4 ՄՈՒ-15 եւ 2 ՄՈՒ-25 ռազմական մարտական ինքնաթիռներ»: Այս տվյալներին կարելի է ավելացնել ԼՂՀ համաձայնեցման գերատեսչությունների բազմաթիվ տվյալները, մասնավորապես Ղարաբաղի երկնքում խփված Ադրբեջանի ռազմաօդային ուժերին պատկանող ռուսական արտադրության 14 ինքնաթիռի մասին լրատվությունը: Լավատեղյակ աղբյուրների համաձայն այս ինքնաթիռները ստացվել են ոչ Ուկրաինայից եւ ոչ Թուրքիայից, այլ հենց Ռուսաստանից: Չի՞ ցանկանում արդյոք ՌԴ պաշտպանության նախարարն իրեն այնքան բնորոշ բծախնդրությամբ զբաղվել այս փաստերի հետաքննությամբ, թե՞ ռուսական զենքով զինված ԱՊՀ անխիր բոլոր երկրներից նրան հետաքրքրում է միայն Հայաստանը: Հայաստանի համար անկասկած չափազանց կարեւոր է, թե այդ ինքնաթիռները Ադրբեջանին են հանձնել ՌԴ կառավարությա՞ն, թե՞ ՌԴ ՊՆ, որեւէ գերատեսչության կամ պաշտոնատարի որոշումներով:

Մեզանում տարածված է այն կարծիքը, թե ՌԴ եւ ՀՀ ռազմավարական շփման եզրեր ունեցող երկրներ են՝ Խոսում, գրում ենք այդ մասին, պարբերաբար ճառեր արտասանում, երբեմն մերկացնում իշխանություններին մերթ արեւմտամետ մերթ ռուսամետ անկայուն կեցվածքը:

Սակայն, վերհիշում ես ակամա 1992-93 թթ.-ի ղարաբաղյան պատերազմի թեժ օրերը, երբ ադրբեջանական կողմից արձակված ռուսական արտադրության 40-50 հրթիռներին մենք պատասխանում էինք 5-6 նույն արտադրության եւ շատ հաճախ ռազմավարային արկերով ու մտածում, ի վերջո, ով է ում դաշնակիցը: Ինչ խոսք ՀՀ եւ ՌԴ ունեն բոլոր հիմքերը ռազմավարական լրջագույն դաշնակիցներ դառնալու համար, սակայն եթե անձայրածիր Ռուսաստանում տիրող տակայական քաոսի պայմաններում այդ դաշինքը կախված լինի ըստ երեւույթին սեփական արտաքին քաղաքականություն մշակած մի գեներալի քմահաճույքներից կամ ռադիոնովականների եւ գրաչովականների միջեւ անձնական հաշիվների մաքրման ընթացքից, արդյոք նման համագործակցությունը հազիվ թե լուրջ հեռանկարներ ունենա: Համենայնդեպս, թվում է, թե ռուսական էսքիբլիբրների վերին օղակներում վերջնականապես պետք է հասկացնեն ՌԴ արտաքին քաղաքական գիծ: Անդրկովկասում համաքաղաքական շեշտը դնելով այս կամ այն երկրի հետ ունեցած հարաբերությունների վրա:

Ելցինը մեծ հույսեր է կապում նոր կառավարության հետ, իսկ ժիրինովսկին՝ ոչ

ՄՈՍԿՎԱ, 18 ՄԱՐՏ, ՆՏ: Ռուսաստանի նախագահի մամլո քարտուղար Յասստրժեմբսկին հայտարարել է, թե Բորիս Ելցինը ակնկալում է, որ կառավարությունը, իբրեւ միասնական եւ զգալիորեն նորացված թիմ, միահամուռ ուժերով աշխատելու է երկրում իրավիճակը, առաջին հերթին, սոցիալական ոլորտում շտկելու ուղղությամբ: Յասստրժեմբսկու խոսքերով, կառավարության խնդիրն է կյանքի կոչել նախագահի ամենամյա ուղերձում շարադրված խնդիրները:

Բոլոր ուժային նախարարները մնալու են իրենց պաշտոններին: Իր պաշտոնը պահպանել է նաեւ արտգործնախարար Եվգենի Պրիմակովը:

Ռուսաստանի լիբերալ-դեմոկրատական կուսակցության առաջնորդ Վլադիմիր Ժիրինովսկին գտնում է, որ կառավարության նոր կազմին չի հաջողվի դիմանալ մինչեւ աշուն: Նա հայտարարել է, թե վերափոխված Նախարարների կաբինետը չի հանդիսանում միասնական քաղաքական կառույց եւ իր կարծիքով, ընդունակ չէ արմատական որոշումներ կայացնելու:

Քլինթոն-Պրիմակով բանավեճը՝ «արդյունավետ»

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 18 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Եվգենի Պրիմակովի հետ ԱՄՆ-ի նախագահ Բիլ Քլինթոնի հանդիպումը Սպիտակ տան պաշտոնական ներկայացուցիչ Մայքլ Մակքերին բնութագրել է որպես Հելսինկիում կայանալիք գագաթաժողովի օրակարգ մտցված հարցերի շուրջ Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի միջեւ տարաձայնությունները «խոշորացույցի տակ դիտարկելու» փորձ: Նշելով, որ այս հանդիպումը կրկնակի երկար է տեւել, քան նախապես ծրագրվել էր, նա լրագրողներին հայտարարել է, թե «բանավեճը շատ արդյունավետ էր»: Միեւնույն ժամանակ, ինչպես հաղորդել է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը, Մակքերին չի կարողացել կամ չի ցանկացել հայտնել ոչ մի վիճելի հիմնախնդիր, որի շուրջ հանդիպման ընթացքում կողմերին հաջողվեր մերձեցնել դիրքորոշումները:

Նրա ասելով, «որոշ առաջընթաց» է ձեռք բերվել տնտեսական հարցերի փաթեթը քննարկելիս, որոնց ԱՄՆ-ի նախագահը առանձնահատուկ նշանակություն է տալիս երկարաժամկետ հեռանկարում Ռուսաստանի հետ հարաբերությունների զարգացման գործում:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Վիսկին եւ Համաշխարհային առեւտրային կազմակերպությանն անդամակցելու գերխնդիրը

ՆԱՐԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

ԱԺ-ի մարտի 18-ի նիստում շարունակվեց քննարկվել Հարկերի մասին ՀՀ օրենքի նախագիծը: Օրինագծի մի շարք դրույթներին առարկող պատգամավորները որպես օրինագծի հիմնական թերություն էին համարում մի քանի դրույթների բարդ, խճճված եւ ոչ հստակ ձեւակերպումները: Առաջարկվեց հստակեցնել հաստատես հաշվառական հաշվառման առնչվող դրույթները: Ընդհուպ, առաջարկ եղավ ողջ հաշվառական հաշվառման համար առանձին օրինագիծ մշակել: Արմեն Մարտիրոսյանը («Բարեփոխումներ») նկատեց, որ երբ մի օրենքը սկսում է կիրառվել որպես կանոն, բախվում է մեկ այլ օրենքի: Մարտիրոսյանն ընդգծեց, որ, փաստորեն, օրենսդրական առկա դաշտը լի է հակասություններով: Նա առաջարկեց նաեւ, որ օրենքում ամրագրվի այն դրույթը, համաձայն որի հարկային սուբսիդիաներ կարող են իրականացվել միայն հարկային մարմինների կողմից: Արամ Մկրտչյանը նշեց, որ հարկային տեսչությունն այնքան մեծաթիվ որոշումներ ու հրահանգներ է ընդունում, որ տնտեսավարող սուբյեկտները չեն հասցնում տեղեկանալ այդ ամենի մասին: Լսելով այսենման ելույթներ, Գրիգոր Ավագյանն անկեղծորեն ասաց, որ այսպիսի երիտասարդներին «մեր ղեկավարները ոչեմ է նկատեն եւ պաշտոններ տան»:

Հերմինե Նաղդալյանը նկատեց, որ վաղուց արդեն ժամանակն է գնահատական տալու Հայաստանում վարվող հարկային քաղաքականությանը, եւ գտնելու այն հարցի պատասխանը, թե վարվող հարկային քաղաքականությունը՝ «տնտեսական օրհասական վիճակի» պատճառը: Նաղդալյանը կոչ արեց նկատի ունենալ, որ «հարկերի մասին օրենքը տնտեսության Սահմանադրությունն է»: Նա առաջարկեց մի փոքր հետաձգել առաջին ընթերցմամբ օրենքի ընդունումը:

Տես էջ 2

Հոգուս Թուրքիայի մասնակցության Եվրոպայի խորհրդաժողովին

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ, 18 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ստրասբուրգից TRT-ի թղթակցի հաղորդման համաձայն, Անգլիան, Ֆրանսիան եւ Իտալիան հանդես են եկել եվրոպայի մշտական խորհրդաժողովին Թուրքիայի պարտադիր մասնակցության օգտին: Խորհրդաժողովի ստեղծման անհրաժեշտության մասին հանդես է եկել Ֆրանսիան: Եթե Թուրքիան ներգրավվի եվրոպայի մշտական խորհրդաժողովում, ապա, ըստ թղթակցի, կարելի է համարել, որ նրան կընդունեն նաեւ եվրամիության լիիրավ անդամության թեկնածու երկրների կազմում:

Ռուսաստանում ավիավթար. 48 զոհ

18 ՄԱՐՏ, RFI, BBC: Ռուսաստանում, Կարաչաեւո-Չերկեսիայի ինքնավար մարզի Չերկեսկ քաղաքի մերձակայքում վթարի ենթարկվեց «Սպավրոպոլյան ուղիներ» ավիաընկերության ուղեւորատար «ԱՆ-24» մի օդանավ, որում գտնվում էին 48 մարդ՝ 41 ուղեւոր եւ անձնակազմի 7 անդամներ: Բոլորը զոհվեցին: Օդանավը թռչում էր Սպավրոպոլ-Տրաբզոն երթուղով: Ըստ նախնական տվյալների՝ ժամը 10:07-ին օդանավն անհետացել է ռադարի էկրանից: Դրանից մի քանի վայրկյան առաջ հնչել է SOS ազդանշանը, որը գլխավոր օդաչուի վահանակից տրվում է ինքնաբերաբար: Ըստ երեւույթին այդ ազդանշանը տրվել է այն պատճառով, որ անձնակազմը ժամանակ չի ունեցել արձագանքելու տեխնիկական ինչ-որ անսարքությանը: Մանրամասները հայտնի կդառնան «սեւ արկղի» հետազոտությունից հետո, որն արդեն իսկ հայտնաբերվել է:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

տեղական

Հանրաքվեության նոր վարչապետի նշանակմանը նախորդեց մի աննախադեպ երեւույթ՝ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը խորհրդավական բնույթի հանդիպումներ ունեցավ ԱԺ խմբակցությունների եւ խորհրդարանում ներկայացված կուսակցությունների ղեկավարների հետ: Մինչեւ այժմ այդպիսի բան չէր եղել, եւ կարելի է ենթադրել, թե սա նախագահի գործելաոճի նկատելի դրական փոփոխության նշան է: Ամեն դեպքում ողջունելի: Պետք է բարեմաղթել, որ այս գործելաձեւը դառնա ավանդույթ: Ի վերջո, կայացած ժողովրդավարության երկրներում սա սովորական ընթացակարգ է, ավելին նախագահը ամենեին էլ միայնակ չի քաղում վարչապետ նշանակելու եւ կառավարություն կազմելու հոգսը: Խորհրդարանական ընտրություններում մեծամասնություն նվաճած կուսակցության խնդիրն է դա, նախագահին ընդամենը հասատում է հաղթողների կազմած կառավարության կազմը, իսկ վարչապետ ինքնաբերաբար դառնում է մեծամասնության լիդերը:

Մենք դեռ շատ ու շատ հեռու ենք այս ընթացակարգից, նույնիսկ մեր Սահմանադրությունն այս մասին հստակ ոչինչ չի դարձնում, սակայն նույնիսկ ամենաերկար ճանապարհը, ինչպես վկայում է չինական իմաստությունը, սկսվում է առաջին քայլից: Եվ այդ առաջին քայլն, սիա, արված է:

Ափսոսանք է հարուցում երկու հանգամանք: ԱԺՄ խմբակցությունը հրաժարվեց նախագահի հետ «վարչապետի նշանակման հարցի շուրջ» խորհրդավական հանդիպում ունենալուց (ինչպես ժամանակին հրաժարվել էր նաեւ վարչապետ Արմեն Սարգսյանին հանդիպելուց): Անկախ դաշնակներից, կարծում եմ երկու դեպքում էլ սխալ էր նման կոշտ, մերժողական կեցվածքը, հարկավոր էր օգտագործել առիթը եւ շարադրել սեփական տեսակետները: Ի վերջո, ոչ ոք չէր կարող արգելել, որ հանդիպման ընթացքում կողմերը դուրս գային օրակարգի շրջանակներից, ինչպես այդ դասահեց, օրինակ, ԱԻՄ-ի դասահեց էլ: Ի վերջո, շատ տխուր է, որ հասարակության մեջ 0.1-0.3 տոկոս վարկանիշ ունեցող առանձին կուսակցությունների ղեկավարներ, որոնք ժամանակին «ցասկեցին» դեպի ընտրություններ ընթացող «Հանրաքվեություն» միավորման «սայլը» եւ դրան բազմած հայտնվեցին ԱԺ դասգամավորների բազկաթոռներին, այսօր հնարավորություն ունեն «ծանրամեծ» զրույցի բռնվելու նախագահի հետ, իսկ նրանցից

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Սովորենք «խաղալ» ըստ կանոնների

դրական փոփոխության նշան է: Ամեն դեպքում ողջունելի: Պետք է բարեմաղթել, որ այս գործելաձեւը դառնա ավանդույթ: Ի վերջո, կայացած ժողովրդավարության երկրներում սա սովորական ընթացակարգ է, ավելին նախագահը ամենեին էլ միայնակ չի քաղում վարչապետ նշանակելու եւ կառավարություն կազմելու հոգսը: Խորհրդարանական ընտրություններում մեծամասնություն նվաճած կուսակցության խնդիրն է դա, նախագահին ընդամենը հասատում է հաղթողների կազմած կառավարության կազմը, իսկ վարչապետ ինքնաբերաբար դառնում է մեծամասնության լիդերը:

Մենք դեռ շատ ու շատ հեռու ենք այս ընթացակարգից, նույնիսկ մեր Սահմանադրությունն այս մասին հստակ ոչինչ չի դարձնում, սակայն նույնիսկ ամենաերկար ճանապարհը, ինչպես վկայում է չինական իմաստությունը, սկսվում է առաջին քայլից: Եվ այդ առաջին քայլն, սիա, արված է:

Ափսոսանք է հարուցում երկու հանգամանք: ԱԺՄ խմբակցությունը հրաժարվեց նախագահի հետ «վարչապետի նշանակման հարցի շուրջ» խորհրդավական հանդիպում ունենալուց (ինչպես ժամանակին հրաժարվել էր նաեւ վարչապետ Արմեն Սարգսյանին հանդիպելուց): Անկախ դաշնակներից, կարծում եմ երկու դեպքում էլ սխալ էր նման կոշտ, մերժողական կեցվածքը, հարկավոր էր օգտագործել առիթը եւ շարադրել սեփական տեսակետները: Ի վերջո, ոչ ոք չէր կարող արգելել, որ հանդիպման ընթացքում կողմերը դուրս գային օրակարգի շրջանակներից, ինչպես այդ դասահեց, օրինակ, ԱԻՄ-ի դասվիրակության եւ նախագահի հանդիպման ժամանակ: ԱԺՄ-ի մերժումից ոչինչ չշահեց հանրաքվեության նախագահը, բայց Վազգեն Մանուկյանն ու իր գլխավորած կազմակերպությունը կորցրեցին, վստահաբար:

Ափսոսանքի արժանի երկրորդ հանգամանքն այն է, որ նախագահն իր այս խորհրդավական հանդիպումները սահմանափակեց զուտ խորհրդարանում ներկայացված կուսակցությունների շրջանակներով: Չեւականորեն Լեւոն Տեր-Պետրոսյանն, անշուշտ, վարվեց ըստ միջազգայնորեն ընդունված չափանիշերի: Բայց ո՞վ չգիտի, որ ներկա խորհրդարանը ամենեին չի արտացոլում հասարակական-քաղաքական ուժերի տեղաբաշխումը Հայաստանում: Ազգային ժողովի 1995-ի ընտրություններն ամենեին էլ այնպես չանցան, որպեսզի նրանում իրենց արժանի տեղը գրավեին բոլոր արժանավորները: Նախագահն, ուրեմն, վարվեց ըստ ձեւի, ոչ ըստ բովանդակության, այլապես խորհրդավական բնույթի այդպիսի հանդիպումներ կունենար նաեւ խորհրդարանում չներկայացված այլ կուսակցությունների ղեկավարների՝ ՀՅԴ-ի, ՀՌԱԿ-ի, ՀԴԿ-ի, գուցե մեկ-երկու ուրիշների հետ էլ: Ի վերջո, շատ տխուր է, որ հասարակության մեջ 0.1-0.3 տոկոս վարկանիշ ունեցող առանձին կուսակցությունների ղեկավարներ, որոնք ժամանակին «ցասկեցին» դեպի ընտրություններ ընթացող «Հանրաքվեություն» միավորման «սայլը» եւ դրան բազմած հայտնվեցին ԱԺ դասգամավորների բազկաթոռներին, այսօր հնարավորություն ունեն «ծանրամեծ» զրույցի բռնվելու նախագահի հետ, իսկ նրանցից

Վազգեն Մանուկյանը դասրաաս է ներկայանալու դատարան, սակայն ոչ դատախազություն

18 ՄԱՐՏ, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ»: Վազգեն Մանուկյանը մարտի 3-ին դիմել էր ՀՀ գլխավոր դատախազ Արտավազդ Գեւորգյանին, մասնավորապես, առաջարկելով իրեն դատի տալ որպես սեպտեմբերի 25-ի դեպքերի կազմակերպիչ: Երկու օր անց, ի դաասխան, գլխավոր դատախազն ԱԺՄ-ի ղեկավարին առաջարկել էր առանց նախադատավճռների, մեղադրանքով ներկայանալ դատախազություն հարցաքննվելու: Մեկնաբանելով Արտավազդ Գեւորգյանի այդ գրությունը, Վազգեն Մանուկյանը «Ազատության» թղթակից Աննա Իսրայելյանին ասաց, թե նպատակահարմար չի գտնում ամեն ինչին դատախազ տալ եւ մանրամասնությունների մեջ մտնել, թե ինչպեսով է կոչիս դատախազի դատախազն ու չի համաձայնեցնում իրականությանը: Նա ասաց նաեւ, որ չի վստահում մեր իրավապահ մարմիններին, այդ թվում նաեւ դատախազությանը, քանի որ յուրաքանչյուրը կարող է դատարանում լսել, թե ինչ «ձեռ են կերել մեր տղաները»: Բացի այդ, մեղադրանքի հարց չկա, քանի որ սեպտեմբերի 25-ի իր արածների համար ինքը որեւիցե բանում չի զղջում եւ գտնում է, որ ժողովուրդը բոլոր դեպքերում իրավունք ունի իր իրավունքները դաշտպանելու համար դիմել ցանկացած քայլի: Ուրիշ հարց է, որ այն մարդիկ, որոնք անմիջապես հարվածել են Ազգային ժողովի նախագահին եւ նրա տեղակալին, պետք է քրեական դատաքննություն կրեն: ԱԺՄ-ի ղեկավարը հայտնեց, որ իր բոլոր գործողություններն այդ ժամանակ եղել են բացահայտ եւ տեղի են ունեցել տասնյակ հազարավոր մարդկանց ներկայությամբ, որեւիցե գաղտնի բան չի արել եւ եթե դաս լինի, ինքը կարող է այդ մասին խոսել դատարանում: Այնպես որ, նախաքննության ոչ մի կարիք, Վազգեն Մանուկյանի կարծիքով, տվյալ դեպքում չկա: Նա ասաց նաեւ, թե ինքը ոչ մի նախադատավճռի չի դնում եւ կարող է դատաստան տալ միայն դատարանում, եւ որ դատախազը պետք է որոշի, թե ինչ պետք է անել: Դատախազությունը կարող է իրեն ձերբակալել, սակայն միեւնույն է, ինքն այնտեղ էլ ոչ մի ցուցմունք չի տա: Խոսելով «Դաշինքի» հետագա անելիքների ու ծրագրերի մասին, Վազգեն Մանուկյանն ասաց, թե շատ բան կախված է ժողովրդից: Տարբեր երկրներում ժողովուրդը ցույց է տվել, թե ինչ գործողությունների կարող է անցնել, երբ «լցվում է համբերության բաժակը»: Ամենա վերջին նախատեսվում է մեծ համաժողով, որտեղ ներկայացված կլինեն բազմաթիվ կուսակցություններ եւ մասնավորապես կանության տարբեր շերտեր, հասարակական տարբեր կազմակերպություններ: Այդ համաժողովում էլ կորոշվի ընդդիմության հետագա գործունեությունը: Վերջում Վազգեն Մանուկյանը հայտնեց, որ իր կարծիքով մեզ այժմ դաստեղծ չի սպառնում, քանի որ արտաքին քաղաքականության մեջ Ադրբեջանը շահեկան քայլերով առաջ է գնում եւ նրան հիմա դաստեղծ պետք չէ, քանի որ ինքը հաղթում է արտաքին քաղաքականությամբ:

Փախստականները անձնագրեր չեն ստանա

ԵՐԵՎԱՆ, 18 ՄԱՐՏ, ՓՍՍ: Փախստականի կարգավիճակ ունեցող քաղաքացիները չեն կարող ստանալ հանրաքվեության նոր անձնագրեր: Համաձայն ՀՀ ՆԳՆ անձնագրերի եւ վիզաների վարչության տեղեկատվության, ցանկության դեպքում փախստականները պետք է հրաժարվեն իրենց կարգավիճակից եւ դիմեն հանրաքվեության քաղաքացիություն ստանալու նպատակով: Ըստ տեղեկատվության, փախստականների հետ կապված բոլոր հարցերը հնարավոր կլինի կանոնակարգել միայն «Փախստականների մասին» օրենքի ընդունումից հետո:

Ծրագիր անտուն եւ մուրացիկ երեխաների վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ, 18 ՄԱՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏՍՊՍ: Հանրաքվեության սոցիալական ապահովության, կրթության, ներքին գործերի եւ առողջապահության նախարարները համատեղ հրաման են ստորագրել թափառաշրջիկ եւ մուրացկան երեխաների վերաբերյալ ծրագիր մշակելու վերաբերյալ: ՀՀ սոցապնախարարության լրատվական ծառայությունից տեղեկացնում են, որ մարտի 18-ին տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ սոցապնախարար Հրանուշ Հակոբյանը ներկայացրել է նախապատրաստվող ծրագրի նպատակն ու խնդիրները: Նա ընդգծել է, որ պետք է մշակել պետական հատուկ քաղաքականություն այդ երեւույթը մեր իրականությունից արմատախիլ անելու համար:

ԱՇԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Վիսկին եւ Համաշխարհային առեւտրային կազմակերպությանն անդամակցելու գերխնդիրը

Սկիզբը էջ 1

Արտ. Թումանյանը օրինագծից այսօրինակ անբավարարվածությունը բացատրեց այն հանգամանքով, որ մի շարք օրենքների բացակայությունը հնարավորություն չի ընձեռում հստակ ամրագրել մի շարք դրույթներ մասնավորապես հարկերի մասին օրենքի նախագծում: Այնուհետեւ հարկային տեսչության պետ Արտ. Թումանյանը հիշատակեց մի օրինակ, երբ տնտեսավարող սուբյեկտներից մեկը անգամ դատարանի որոշումից հետո շարունակում է հարկեր չմուծել:

Արմ. Եղիազարյանը ներկայացնելով հանձնաժողովի դիրքորոշումը հիշյալ օրինագծի շուրջ, հարկ համարեց նկատել, որ «մենք բոլորս լուրջ մարդիկ ենք»: Դավիթ Շահնազարյանը տեղից ռեպլիկ նետեց, ասելով՝ դա էլ է պետք քվեարկել: Չնայած առարկություններին, նախագիծն ընդունվեց 105 կողմով:

ԱԺ-ի երեկվա նիստում քննարկվող օրենքի հաջորդ նախագիծը վերաբերում էր մասաստուրքերի դրույքաչափերին: Ներկայացնելով օրենքի նախագիծը՝ Ֆինանսների նախարար Լեւոն Բարխուդարյանն անկեղծորեն խոստովանեց, որ նախագծի ընդունումը պետք է... համաշխարհային առեւտրային կազմակերպությանն անդամակցելու համար: Արմեն Մարտիրոսյանը նկատեց՝ այս օրենքի ընդունումը վտանգում է ներքին շուկայի պահպանումը: Հիշատակվեց մասնավորապես պլաստիկ գործարանի օրինակը: «Մեր ձեռնարկությունը խանգեցնք»՝ հարեւան հանրապետության նույն տեսակի ու որակի արտադրանքի ներկրման բարենպաստ պայմաններ ստեղծելով, նկատեց Մարտիրոսյանը: Հայտարարելով, որ դեմ է քվեարկելու օրենքի նախագծին, Մարտիրոսյանը հիշեցրեց, որ ներքին շուկան պահպանելու խնդիրը ոչ մի պետություն չի նետել իր ուսերից:

Հերմինե Նաղդալյանը նշեց, որ արտահանման համար օրենքի նախագծում հիշատակվող ապրանքների գրեթե տոկոսը, ըստ էության, չի վերացնում հայ գործարարների ճանապարհներին առկա խոչընդոտները այն պարզ պատճառով, որ «հայ գործարարների համար պորտուգալական կամ ամերիկյան շուկաներ գրավելն օրախնդիր չէ»: Նաղդալյանը ավելացրեց, ասելով, թե «մենք սրանով ոչ թե ֆիսկալ խնդիր ենք լուծում, այլ սոցիալական լարվածություն ենք սերմանում»: «Ի՞նչ է, մեր բնակչության կենսամակարդակն այդպես խիստ բարձրացե՞լ է», հարցրեց Նաղդալյանը, նկատի ունենալով 1-ին անհրաժեշտության մի շարք ապրանքների, սննդատեսակների մասաստուրքերի, դրույքաչափերի բարձրացումը:

Լեոնիդ Հակոբյանը կոմկուսի անունից նշեց, որ տնտեսական քաղաքականության հիմքում պետք է դրվի հայրենական արտադրողի պաշտպանությունը: Հակոբյանը հիշատակեց մի փաստ, համաձայն որի ՀԽՍՀ-ն տալիս էր միությունում արտադրվող 42 հազար անուն տնտեսական ապրանքներից 31.000 անուն արտադրանք: «Այս օրենքով մենք գնում ենք տնտեսական մոնոպոլիաների խոշորացմանը, մաֆիոզ խմբավորումների սնմանը»: «8-10-12 մարդկանց ձեռքում են կենտրոնացվում ներմուծվող ապրանքները», նկատեց Հակոբյանը, ավելացնելով՝ «այս օրենքը ներկայացնում է տարբեր խավերի կողմից լոբբիացված աշխատանք, որը պարտադրվում է ԱԺ-ին»: Կոմկուսի ներկայացուցիչը վերջում ընդգծեց, որ «մենք պետք է իմանանք մեր հանրապետության առանձնահատկությունները, այլ ոչ թե լուծենք առանձին խմբավորումների շահերը»:

Կամո Արեյանը «Բարեփոխումներ» անունից կոչ արեց հարցը չքաղաքականացնել, քանի որ ներկրման եւ արտահանման «զորանոցային մոտեցումները» շուկայական տնտեսության դեպքում բացառվում են: Չնայած սրան, Արեյանը նկատեց, որ չի կարելի 10 տոկոսով բարձրացնել 1-ին անհրաժեշտության ապրանքների մասաստուրքերի դրույքաչափերը: Արեյանն առաջարկեց օրենքի նախագծի քննարկումը հետաձգել եւս 15 օրով:

Բ. Արարքցյանը նշեց, որ այս օրենքի նախագիծը Համաշխարհային առեւտրային կազմակերպության հետ կապ ունի այնքանով, որքանով այնտեղ օգտագործված է այդ կազմակերպության կողմավորումը: ԱԺ նախագահը նշեց, որ տեղական արտադրության շահերի պաշտպանության հետ այս օրենքը քիչ կապ ունի: Ակնհայտ է, որ այս օրենքի նախագծի ընդունմանը ԱԺ նախագահը կողմ էր, սակայն նկատելով, որ քվեարկությունը ցանկալի արդյունք կարող է չտալիս, Արարքցյանը առաջարկեց հետաձգել քվեարկությունը վաղվան, փոխարենը՝ փոփոխությունների ուղղությամբ աշխատել գիշերը:

Մասաստուրքերի դրույքաչափերի մասին օրենքի նախագիծը սահմանում է 10 տոկոսի մասաստուրք մի շարք ներկրվող արտադրատեսակների վրա, մասնավորապես՝ մսի, ձկնեղենի, կաթի եւ կաթնեղենի, ձվի, սուրճի, թեյի, բրնձի, բուսական հյութերի, շաքարի, կոշիկի, հեռուստացույցների, ձայնարձագների, կահույքի վրա: Հիշյալ օրինագծից ուշագրավ 2 պահ ներկայացնենք: Պարզվում է, որ Հայաստան կարող եք ներկրել (կամ արտահանել) նավեր, նավակներ, առանց մասաստուրքերի վճարման: Մասաստուրք չի սահմանվում նաեւ վիսկիի ներմուծման համար, թեպետ ալկոհոլային եւ ոչ ալկոհոլային խմիչքների, մակարոնեղենի համար սահմանվող տոկոսադրույքը 10-ն է:

Այս ամենից հետո մնում է ենթադրել, որ Հայաստանի ազգաբնակչությունը, մեր ավերված ու սվերային տնտեսությունն ամենաշատը կարիք ունեն նավերի ու վիսկիների, իսկ բյուջեի մուտքերը պետք է ապահովվեն երիցս անապահով սոցիալական խավերի հաշվին:

Կորչի՞ տնտեսական առաջընթացի հրամայականը, կեցցե՞ն տնտեսավարող կլանների շահերը:

ԵՐԵՎԱՆ

Միդլանդ Արմենիա բանկի 1-ին տարեդարձը

«Արմենիա» հյուրանոցում երեկ երեկոյան նշվեց Միդլանդ Արմենիա բանկի գործունեության առաջին տարեդարձը: Նախարարների, դատավարների, քաղաքագլխի, տարբեր գերատեսչությունների պետերի, օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցիչների, այլեւայլ կազմակերպությունների, լրատվական միջոցների ղեկավարների, եւ ամենագլխավորը բանկի ծառայություններից օգտվող հաճախորդների մասնակցությամբ կայացած ընդունելությանը դատաստանական որեւէ խոսք չարտասանվեց: Մեկ տարեկան հոբելյարը «ընդամենը» բանկ է, ֆինանսական հիմնարկ, գործնական ու գործնամիտ աշխատանքի կենտրոն, որտեղ դրամն է խոսում: Եվ ընդունելության կազմակերպիչները բանկի ղեկավարությունն ու աշխատակիցներն, եւ գլխավոր հյուրընկալը լոնդոնահայ բիզնեսմեն Վաչե Մանուկյանը, կարծես դա էին ուզեցել շեշտել: Իսկ դրամի լեզուն Հայաստանում մենք սովորում ենք նաեւ այս բանկի միջոցով: Արդեն մեկ տարի է:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության է տալիս
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի խմբագիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Թելեֆոն 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Տնօրեն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / հեռ. 562863
A STYLE համակարգչային
ծառայություն / 581841
Apple Macintosh
համակարգչային շարուածը
«Ազգ» թերթի
Յողոմը «Ազգին» պարտադիր է
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՔՆՔԱՑԻԿ

ԿԼՈՐ ՍԵՂԱՆ

Կանայք ազգային անվտանգության համար կարեւոր են համարում միջազգային քարոզչությունը

Կանանց հանրապետական խորհրդի նախաձեռնությամբ մարտի 18-ին հրավիրված «Ազգային անվտանգության խնդիրները եւ հայ կանայք» թեմայով կլոր սեղանի մասնակիցները ազգային հիմնախնդիրներով զբաղվող կանանց կազմակերպությունների նախագահներն էին ու հայտնի մտավորական կանայք, իսկ հիմնական զեկուցողներ ԵՊՀ-ի դասախոսներ Հրանուշ Խառատյանն ու Կարինե Դանիելյանը: Ազգային անվտանգության խնդիրների վերաբերյալ զեկուցողների մեկնաբանությունը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի. ներքաղաքական «Հայաստանաբնակներն ուղղակի ֆիզիկական, բարոյահոգեբանական ու մշակութային վտանգի մեջ են», ինչպես պնդում է փորձագետ Հրանուշ Խառատյանը, եւ արտաքին արյամբ նվաճված Արցախը տանուլ ենք տալիս դիվանագիտական ասպարեզում նկատի ունենալով հետլիսաբոնյան ժամանակաշրջանը:

Ազգային անվտանգության վերաբերյալ իր պատկերացումները շարադրելիս տիկին Խառատյանը նշեց, որ ֆիզիկական անվտանգությունն ուղղակիորեն պատերազմական գործողություններ չեն, այլեւ պատերազմից բխող այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են տնտեսական ու քաղաքական շրջափակումները: Հայաստանում ներկայումս ստեղծված տնտեսական ու հասարակական ճգնաժամը, որն ուղղակիորեն վտանգում է հայ ժողովրդի հայաստանաբնակ հատվածի առնվազն կեսի ֆիզիկական գոյության շարունակելիությունը: Այս միտքը նա հայտնեց հիմք ընդունելով ԵՊՀ-ի ազգագրության ամբիոնի, ազգագրության ինստիտուտի եւ բժշկական համալսարանի կատարած հետազոտությունները: Փորձագետը հայտնեց, որ ազգաբնակչության կեսից ավելին տառապում է ամենատարբեր հիվանդություններով, սակայն բժշկի չդիմելը, հետեւաբար նաեւ պոլիկլինիկաներում չգրանցվելը հնարավորություն չի տալիս պետական ծրագիր մշակել այդ ուղղությամբ: Ամփոփելով հայ ժողովրդին սպառնացող ֆիզիկական անվտանգության հարցի իր պատկերացումները, տիկին Խառատյանն այն տեսակետը հայտնեց, թե, այնուամենայնիվ, «աբխարհը թույլ չի տա, որ ավտոմատներով կրակեն մեզ, եւ ժամանակն է հասկացնել, թե ինչպես պետք է պահպանենք մեր տեսակի գոյությունը: Նա ոչ պակաս կարեւոր համարեց մշակութային ու բարոյական անվտանգության սպառնալիքը, որի հիմքը կրթական համակարգն է, սակայն, ինչպես նշեց նա, դպրոցներում ստեղծված իրավիճակը բոլորովին չի նպաստում ժողովրդի բարոյահոգեբանական անվտանգության ապահովմանը:

Հ. Խառատյանը նշեց, թե անձամբ իր համար շատ կարեւոր է դարաբաղցու կյանքը փրկելը, քան թե բոլոր դարաբաղցիներին զոհ տալը հանուն Ղարաբաղի: Կլոր սեղանի մասնակիցները մեծամասնությամբ կտրուկ դեմ արտահայտվեցին վերջին մտքին, ընդգծելով, որ առանց Ղարաբաղի դարաբաղցի չի կարող լինել, եւ իրենց ողջ ուժերը միտված են երկուսը համատեղելուն:

Մյուս զեկուցողը Կարինե Դանիելյանը համամիտ չէր նաեւ տիկին Խառատյանի այն մտքին, թե աբխարհը թույլ չի տա, որ ավտոմատով կոտորեն մեզ: Նրա տպավորությամբ, «մեր հարեւանները զենքը վերցնում են այն ժամանակ, երբ տեղեկատվական դաշտն արդեն պատրաստել են եւ համոզված են, որ ազգը սրի քաշելու դեմքում չի գտնվի մի երկիր, որը պաշտպանի տուժածին»: Կ. Դանիելյանի կարծիքով, Լիսաբոնը ակնհայտորեն ցույց տվեց, որ մենք պարտություն ենք կրել տեղեկատվական ասպարեզում, եւ Հայաստանի շուրջ օղակը գնալով սեղմվում է: Ներկաները համաձայնեցին մակարդակով տեղեկատվական դաշտի նվաճումը Հայաստանի անվտանգության ապահովման կարեւոր գործոններից մեկը համարեցին, որը դիվանագիտական նվաճումների համար հող կարող է նախապատրաստել:

ՀՕՄ-ի ատենադեսուհի Ալվարդ Պետրոսյանը ազգային անվտանգության տեսակետից ոչ պակաս վտանգված համարեց հայկական սփյուռքի գոյությունը, նշելով, որ ամերիկացման վտանգի դեմ պայքարի ամենալավագույն ձեւերից մեկը հայաստանակենտրոն քաղաքականությունն է բոլոր ուղղություններով: «Նույն բանավեճը նաեւ սփյուռքում է ընթանում ուժեղ հայրենիք, թե ուժեղ սփյուռք», հայտնեց նա, հրաժարակելով նաեւ իր մասնավոր կարծիքը հայաստանակենտրոնությամբ պետք է պայքարել դրա դեմ: Տիկին Պետրոսյանը ազգային անվտանգության կարեւոր խնդիրներից մեկը դպրոց-բանակ կապի ապահովումը համարեց, առաջարկելով կանանց կազմակերպությունների ներկայացուցիչներից ստեղծել այդ կապը հսկող վերահսկիչ հանձնաժողով: Ազգային անվտանգության ապահովման ուղղությամբ ներկաները բազմաթիվ հարցեր կարեւորեցին, որոնց հիման վրա, ինչպես հայտնեց կանանց հանրապետական խորհրդի նախագահ Նորա Հակոբյանը, պատրաստվում են եզրափակիչ փաստաթուղթ մշակել եւ ներկայացնել իշխանության բոլոր մարմիններին, միջազգային կազմակերպություններին, Հայաստանում գործող դեսպանություններին եւ լրատվամիջոցներին:

ՍԱՍՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԵԳԻՊՏՈՍ

ՀՀ արտգործնախարարին ընդունեց նախագահ Հոսնի Մուբարաքը

Ստորագրվել է գիտա-մշակութային համագործակցության համաձայնագիր

ԵՐԵՎԱՆ, 18 ՄԱՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Այցով Եգիպտոսում գտնվող ՀՀ արտգործնախարար Ալեքսանդր Արզումանյանին մարտի 17-ին նախագահական ընդունելությունների պալատում ընդունել է Եգիպտոսի Արաբական Հանրապետության նախագահ Մուհամմադ Հոսնի Մուբարաքը:

ՀՀ արտգործնախարարը ԵԱՀ նախագահին հանգամանորեն ներկայացրել է ԼՂ հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված Հայաստանի կառավարության քաղաքները, հանրապետության ներկա վիճակը, տնտեսական բնագավառում կատարվող բարեփոխումները, սեփականաշնորհման գործընթացը եւ բանկային ազատ համակարգը:

Եգիպտոսի նախագահը, անդրադառնալով Եգիպտոս-Հայաստան երկկողմ բարեկամական հարաբերություններին, նշել է, որ պետք է ուշադրություն դարձնել երկու երկրների առեւտրական հարաբերություններին, հատկապես կարեւորելով օդային հաղորդակցությունների անհրաժեշտությունը, Հայաստանում եգիպտական բանկի հիմնումը, եգիպտական արդյունաբերության առեւտրի կենտրոնի աշխատանքների աշխուժացումը եւ սերտ համագործակցությունը գիտության եւ տեխնոլոգիաների բնագավառում:

ՀՀ ԱԳՆ հասարակայնության եւ մամուլի հետ հարաբերությունների վարչությունից հայտնում են, որ Ա. Արզումանյանը ԵԱՀ նախագահ Հոսնի Մուբարաքին հանձնել է ՀՀ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի ուղերձը եւ վերահաստատել Հայաստան այցելելու ՀՀ նախագահի հրավերը: Ընդունելով հրավերը, ԵԱՀ նախագահը խնդրել է իր «եղբորը՝ ՀՀ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանին, հաղորդել իր ամենաջերմ ողջույնն ու լավագույն բարեմաղթանքները»:

Եգիպտոսի Արաբական Հանրապետության արտգործնախարարությունում մարտի 17-ին ՀՀ արտգործնախարար Ալեքսանդր Արզումանյանը եւ ԵԱՀ արտգործնախարար Ամր Մուսան ստորագրել են ՀՀ եւ ԵԱՀ կառավարությունների միջեւ «Մշակույթի, կրթության եւ գիտության բնագավառներում համագործակցության մասին համաձայնագիրը»:

Հրդեհ Թբիլիսիի Հայկական դրամատիկական թատրոնի շենքում

ԹԲԻԼԻՍԻ, 18 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Մարտի 18-ին, տեղական ժամանակով ժամը 6-ն անց 20 րոպեին հրդեհ է բռնկվել Վրաստանի մայրաքաղաքի Հայկական դրամատիկական թատրոնի շենքում: Կրակը ծառայել է տանիքի մի մասը եւ շենքի ծակատը՝ շուրջ 30 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով: Պատահարի վայր ժամանած հրշեջ ուժ անձնակազմերի ուժերով հրդեհը մարվել է 25 րոպեի ընթացքում: Ինչպես Արմենպրեսը տեղեկացել է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդագրությունից, որն էլ հենվել է Վրաստանի ներքին գործերի նախարարության մամլո կենտրոնի վրա, զոհեր չկան: Նախնական տվյալներով, հրդեհի պատճառ է դարձել էլեկտրահաղորդման ցանցի անսարքությունը:

Սուրեն Հարությունյանը Եվգենի Պրիմակովի խորհրդակցում

ԵՐԵՎԱՆ, 18 ՄԱՐՏ, ՓԱՍՍ: Ըստ չճշտված լուրերի, Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի նախկին առաջին քարտուղար Սուրեն Հարությունյանը աշխատանքի է անցել Ռուսաստանի արտաքին քաղաքական գերատեսչությունում: *Նույն տեղեկությունների համաձայն, մար մտամտվկի՝ Հ. ՌԴ* — արտգործնախարար Եվգենի Պրիմակովի խորհրդական:

Մոսկվայում ստեղծվում է սոցդաշնք

ԵՐԵՎԱՆ, 18 ՄԱՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հայաստանի դեմոկրատական կուսակցության կենտրոնական գրասենյակից հայտնել են, որ Ռուսաստանի եւ նախկին ԽՍՀՄ մի շարք հանրապետությունների ձախ ուժերի նախաձեռնությամբ այս օրերին Մոսկվայում անց է կացվում կուսակցական առաջնորդների հավաք՝ «Սոցիալիստական ուժերի դաշինք» ստեղծելու նպատակով: Հայաստանից հավաքին մասնակցում է ՀԴԿ նախագահ Արամ Սարգսյանը:

ԵՐԵՎԱՆ

Արգիշտի Կիվիրյանը «դասական հեղաշրջման» փո՞րձ է անում

Գերագույն դատարանում ընթացող «Սեպտեմբերի 25/1» դատաքննության երեկվա նիստում ամբաստանյալ լրագրող Արգիշտի Կիվիրյանը, կարելի է ասել, «դասական հեղաշրջման» փորձ արեց: Հայտարարելով, որ իր չորս բախտակիցներից ճանաչում է միայն Հաբեթ Պետրոսյանին, մյուսներին տեսել է միայն դատարանի դահլիճում, Կիվիրյանն ասաց, որ ոչ բոլոր նախաքննական ցուցմունքներն են համապատասխանում իրականությանը: Պատճառը նախաքննության ընթացքում կիրառված անթույլատրելի մեթոդներն են, եւ ճիշտ է այն, ինչ ասում է «այս դահլիճում»: Այն է՝ սեպտեմբերի 25-ին ժամը 19-ից հետո եղել է Աժ ընդունարանի մոտ, որպես Վազգեն Մանուկյանի համախոհ եւ լրագրող: Երբ ժողովուրդն սկսել է հուզվել, բարձրացել է Հաբեթ Պետրոսյանի ուսերին եւ մի հանի կադր նկարահանել: «Սա ասում եմ այնքանով, որքանով Պետրոսյանը խոսել է այդ մասին: Ասվածն, ըստ էության, ինձ ներկայացված մեղադրանքի հետ առնչություն չունի: Եթե մտել եմ Աժ, ապա՝ առանց որեւէ մեկին դիմադրելու կամ որեւէ բան ավերելու, այդ մասին պարտավոր կլինեի խոսել, գուցե, եթե դատին ամբոխին: Ինձ վերաբերող մասով ցուցմունքների հակասություններ չկան, իսկ մյուսների վերաբերյալ պատրաստ եմ ցուցմունքներ տալ բացառապես որպես վկա՝ այլ գործերով», ասաց ամբաստանյալը:

Կիվիրյանը բերման է ենթարկվել հոկտեմբերի 2-ին, տարվել ԱԱՆ, որտեղ երեք օր «մեթոդաբար» ծեծվել է ինչպես սեւազգեստ անձանց կողմից, որ, նրա տպավորությամբ ԱԱՆ աշխատակիցներ չէին: Ամբաստանյալը խուսափեց մանրամասներից՝ «չստորանալու համար», բայց ասաց, որ ականջից ներքեւ սպի ունեցող մեկն առանձին դաժանությամբ է կատարել իր գործը: Ծեծերի ընդմիջումներին Կիվիրյանը պահվել է մեկ քառակուսի մետր չափերով վանդակում, երեք օր ապօրինաբար պահվելուց հետո տարվել ԱԱՆ մեկուսարան, վերջինիս աշխատակիցների վերաբերմունքից գոհ է: Քննիչը չի ապահովել իր փաստաբանի ֆիզիկական ներկայությունը հարցաքննություններին, ուստի նախաքննական ցուցմունքներն անօրինական են եւ չեն կարող օգտագործվել իր դեմ: Բերման օրը կազմվել է արձանագրություն, որը գործում բացակայում է, եւ ամբաստանյալը խնդրեց հայտնաբերել կորած փաստաթուղթը եւ կցել գործին, ինչպես նաեւ պատասխանատվության ենթարկել նախաքննական օրինախախտումների հեղինակներին: Կիվիրյանը հետեւողականորեն չեզոքացրեց դատավորի եւ պետական մեղադրողի բոլոր հարցերը՝ «չի առնչվում ներկայացված մեղադրանքին» եւ «այդ հարցին արդեն պատասխանել եմ» արտահայտություններով: Ընտրված պաշտպանական մարտավարությունը, բերեւս, նպատակ ուներ ընդգծելու «Սեպտեմբերի 25» գործի մասնատման մերժելիությունը:

Այնուհետեւ լսվեցին ամբաստանյալ Մկրտիչ Մեղավորյանի (Դիմայի) ցուցմունքները: Վերջինս ավարտել է Տաշենի ՊԱԿ-ի դպրոցը, 10 տարի աշխատել ՊԱԿ-ում որպես ավագ լեյտենանտ, վաստակաշրջության պատճառով տեղափոխվել ՈԱՍՏՊ միավորում, պատասխանատու ավտոտրանսպորտային ձեռնարկությունում, հացի գործարանում, մինչեւ սեպտեմբերի 30-ը աշխատել երկաթգծի վարչությունում: 1995-ին անդամագրվել է ԱԺՄ-ին, եղել Աժ պատգամավոր Շավարշ Քոչարյանի, 96-ին՝ Վազգեն Մանուկյանի վստահված անձը, թիկնապահություն երբեւէ չի արել: Սեպտեմբերի 24-ին, աշխատանքից հետո, ուշացումով միացել է երթին, 25-ին նույնպես ուշացումով օգտվելով Այրում-Երեւան վերջին գնացքից՝ միացել հանրահավաքին: Ազատության հրապարակի պաղպաղակի տաղավարի մոտ նկատել է սպորտային համազգեստներով, «կարճ մազերով, իրար նման, չափազանց ակտիվ» 40-45 երիտասարդների մի խումբ, որոնց հանդիպել է նաեւ երթի ընթացքում, հետո տեսել է պարիսպը ծոծելիս: Ժամը 19-ին մոտ վերադարձել է տուն (ապրում է Օրբելյի մերձակայքում), կրակոցներ լսելով, դուրս է եկել, զրուցել հարեւանների հետ, գիշերվա ժամը 2-ին զարթնելով (փողոցում աղմուկ էր), գնացել հրապարակ, ուր, շտաբօգնության մեքենայի մեջ տեսել է «բոյով Արմենին», օգնել բժիշկներին տեղափոխելու վերջինիս, սակայն ճանապարհին, հանդիպելով Արմենի հարազատներին, վերադարձել տուն: Շերբակալվել է սեպտեմբերի 30-ին, ՆԳՆ-ում ենթարկվել դաժան ծեծի (նրանից պահանջվել է խոստովանել, որ ոմն Ավետայի եղբայրն է: Վերջինս, ըստ ամբաստանյալների մի մասի նախաքննական ցուցմունքների, մոխրամանով հարվածել էր «Բաբիկի» գլխին):

Դատաքննությունը կշարունակվի այսօր:

«Սեպտեմբերի 25»-ով մեղադրվող Օնիկ Հունանյանի վիճակը մտահոգիչ է

«Սեպտեմբերի 25»-ի «դուստր» գործով մեղադրյալ Օնիկ Հունանյանի առողջական վիճակը կտրուկ վատացել է՝ ակնկալելով մամուլի բարոյական աջակցությունը, լրագրողներին հայտնեց Հունանյանի, ինչպես նաեւ «սեպտեմբերի 25/1» գործով ամբաստանյալ Մկրտիչ Մեղավորյանի դաշտպան Ժ. Շահարյանը: Հունանյանը 57 տարեկան է, կալանքի տակ է արդեն 6 ամիս եւ զբաղվորը արտի արտաս ունի: Հերթական տագնապից հետո նա մեկուսարանի հիվանդանոցային բաժանմունքում է, որն Շահարյանի վկայությամբ վատ վիճակում: Իրավաբանը միջնորդություն է ներկայացրել ԳԴ կոլեգիայի անդամ Մարտին Կարապետյանին՝ իր պաշտպանյալի նկատմամբ խափանման միջոցը փոխելու վերաբերյալ, եւ հույս ունի, որ տուժող կողմը մեծահոգաբար «երկու խոսք կասի» հօգուտ Հունանյանի: «Բարձրաստիճան պաշտոնյաներ զգոնությունը էին հայտնել, որ 25-ի դեպքերի պատճառով զոհեր չեղան: Չեմ ուզում, որ ունենանք այդ զոհը», ասաց դատապաշտպանը՝ նկատի առնելով, որ դատաքննության սկիզբը չի երեւում, իսկ ուշացումը կարող է ճակատագրական լինել պաշտպանյալի համար: Լ. Պ.

ՏԵՂԱԿԱՆ

Ասարակցիները հեռուստացույց չեն դիտում

ԱՇՏԱՐԱԿ, 18 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Անհայտ անձանց կողմից անդրադարձիչ հայելիների հափշտակման հետեւանքով այսօր երեւանից եւ Մոսկվայից տվող հեռուստահաղորդումները դիտելու հնարավորությունից զրկված է մարզկենտրոնի գերակշիռ մասը: Արագածոտնի մարզկենտրոնի վերահաղորդիչ կայանի համատեղ վերականգնման համաձայնություն է ձեռք բերվել Ասարակ խաղաքաղաքի զարգացման հիմնադրամի եւ «ՀՀ հեռուստառադիոհաղորդումների հաղորդման կենտրոն» պետական ձեռնարկության միջեւ: Կայանում նոր ալյումինե թիթեղների եւ հաղորդիչ կայանի գործունեությունը վերականգնելու աշխատանքները կարժենան մոտ 1 մլն դրամ, որը կհոգա հիմնադրամը:

Պղինձ տեղափոխելը թանկ նստեց

ՍՊԻՏԱԿ, 18 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Սպիտակ-երեւան ավտոխմբագրում վարի է ենթարկվել «Մերսեդես» մակնիշի մի բեռնատար ավտոմեքենա, որը վարել է Թուրքիայի քաղաքացի Սկչիկլեկ Իբրահիմը: 16000 կգ բեռնատարողությամբ ավտոմեքենան, բեռնված՝ 24 հազար կգ պղնձի ջարդոնով, վարի հետեւանքով լուրջ նյութական վնասներ է կրել: Լոռու մարզային ներքին գործերի բաժնի Սպիտակի բաժանմունքից հայտնեցին, որ վարի պատճառը եղել է մեքենայի արգելակների շարքից դուրս գալը:

digitised by A.R.A.R.@

ազգային

ԲԱՐԲԱՐՈՍՈՒԹՅՈՒՆ

Մինչեւ ե՞րբ

Խոր ցավով ու վրդովմունքով կարդացի «Ազգ» թերթում այն լուրը, թե Կիպրոսի հայկական Սուրբ Մակարա վանքը «ամբողջովին թալանված ու քանդված է»: Վերջերս լսել էի այդ մասին, բայց չէի ուզում հավատալ: Իսկ այժմ ահա, ինչպես հաղորդել է Փարիզի «Յառաջ» թերթը, վկայությունը գալիս է Փարիզում Կիպրոսի դեսպանատան ամսագիր-տեղեկատուից, որ «մշակութային եւ կրոնական հարստության շարունակվող թալանի ու ոչնչացման» մասին հոդվածի հետ հրապարակել է նաեւ հայկական քանդված վանքի նկարը:

Պատանեկությանս օրերից սիրելի վանքի վրա կատարված այդ բարբարոսությունը անձնապես խորվում է ինձ...

Բայց նախ որոշ տեղեկություններ տամ: Սուրբ Մակարա վանքը գտնվում է Նիկոսիայից երեսուն կիլոմետր հյուսիս-արեւելք. Կիրինյան լեռնաշղթայի մյուս կողմը, անտառապատ լեռների ծոցում, ծովահայաց դրախտային բնության մեջ: Շատ հին վանք է: Հիմնել են դպիրները եւ նվիրագործել չորրորդ դարում ապրած իրենց Սուրբ Մակարի անունով, երբ հին եգիպտացիների այդ քրիստոնեացած հետնորդները մի ոչ մեծ համայնք են ունեցել Կիպրոսում: Ղպտիական եկեղեցին հնուց անտի դափանակից եւ միշտ սերտորեն կապված է եղել Հայ առաքելական եկեղեցուն, որին էլ փոխանցվել է վանքը: Հայերի ոչ միայն բավական նշանակալից համայնք էր գոյացել կղզում դեռ վաղ միջնադարից, այլեւ Կիլիկյան հայկական թագավորությունը աշխույժ շփումներ ուներ Կիպրոսի Լուսինյան թագավորության հետ: Վանքի պատմականությանը մի ուրույն երանգ է տալիս նաեւ այն, որ Մխիթար Սեբաստացին մի որոշ ժամանակ ապրել է այստեղ, երբ հարմար վայր էր որոնում իր մտահղացած միաբանությունը հիմնելու համար: Ու վանքի կողքին այն գեղեցիկ անտառապատ բարձունքը, որի գագաթին հուշարձան կար նրա պատվին, կոչվում էր Մխիթարա բլուր:

Միակ եկեղեցին, վանքի ներսում, ամենայն հավանականությամբ դեռ դպիրների կառուցած միանավ ամրակուռ բազիլիկա էր, որի վրա հայկական փոքր գմբեթ էր ավելացվել: Իսկ ամբողջ վանքը մեր օրերում պատկառելի երկհարկանի շինություն էր, ինչպես ընթերցողը կարող է տեսնել հոդվածիս կից լուսանկարում, որ արված է թուրքական բանակի 1974-ին Կիպրոս ներխուժելուց եւ կղզու հյուսիսային մասը ծայրեծայր գրավելուց առաջ: Թեպետ վանականներից վաղուց թափուր արդեն, վանքը բարեկարգ էր պահպանվում իր դարպաս կոչվող դահլիճով, բազմաթիվ սենյակներով, հարակից հարմարանքներով, մեղվանոցով, պտղատու այգիով եւ առհասարակ ամբողջ շրջապատով: Դա սիրելի զբոսավայր էր, նաեւ ուխտատեղի: անշուշտ, որ ամեն տարի, տոնի օրը, ավանդական հարիսան էր եփվում ի ճաշակումն ուխտի եկած բազմության:

Երբ մեծ եղեռնից հետո, ժողովրդի հետ, տարագրվեց նաեւ Մեծի Տանն Կիլիկիո դարավոր Աթոռը, ծերունի վեսակիր Սահակ կաթողիկոսն ամոանը մերթ գալիս էր Սուրբ Մակարա վանք Անթիլիասից ոչ թե լոկ հանգստանալու, այլ մանավանդ, ինչպես պատմում





էին, այստեղից նայելու իր Կիլիկիային: Եվ նույնիսկ, ջորի նստած, իր ուղեկիցներով բարձրանում էր մոտակա սարի գագաթը, որտեղից Կիլիկիո լեռները այնքան մոտ են թվում ծովից անդին: Այդ գագաթը նա «Կիլիկյան դիտարան» է կոչել: Եվ այդպես էլ շարունակում էին կոչել կիպրահայերը:

Ասացի, որ կատարված բարբարոսությունը անձնապես խորվում է ինձ: Եվ նույնպես խորվում է, անշուշտ, երբեմնի իմ ավագ ու կրտսեր դասընկեր-դասընկերուհիներին Կիպրոսի Մելգոնյան կրթական գիշերօթիկ թերի բարձրագույն հասատության բազմահարյուր սաներին աշխարհի տարբեր ծագերում: Վանքն իր շրջակա բնությամբ մի ամբողջ հարազատ աշխարհ է եղել մեր պատանեկության տարիներին: Ամեն ամառ երկու-երեք ամիս ապրում էինք այնտեղ, արջիկները վանքի սենյակներում, տղաները ավելի վեր սոճու անտառի մեջ մի բացատում, Կիլիկյան դիտարանի փեշին, շուրջանակի լարած մեր խոշոր վրանների մեջ, «վրանաքաղաքում»: Դա լոկ օդափոխություն չէր, այլ ամառային ազատորեն կազմակերպված ուսումնա-մարզական կյանք: շրջակա բարձունքները կամ դեղի ծով արշավներով, մշակութային միջոցառումներով, նաեւ, անշուշտ, կիրակնօրյա պատարագով: Մի ամառ, նույնիսկ, երգչախումբ-դերասանական մասնակցեցնող տղաներ ու աղջիկներ: ավագ դասարաններից, կատարեցին «Անուշ»-ը վանքի մուտքի առաջ, այստեղ ասած բնական բեմում սոճու անտառի դարավանդին: Բոլոր այդ սարերն ու ձորերը, անտառներն ու վիթխարի ժայռերը, այգիներն աղբյուրների մոտ, հեռվում էլ երեւացող Կիլիկյան լեռներով, այնքան էին հարազատացել, որ զանազան վայրեր կոչել էինք հայկական անուններով: Մի խոսքով, այդ աշխարհը մի փոքրիկ Հայաստան, մի փոքրիկ Կիլիկիա էինք դարձրել մեզ համար բոլորս էլ տարագիր ծնողների զավակներ, որ ուղարկվել էինք տարբեր գաղթօջախներից ուսանելու Մելգոնյանում, ՀԲԸՄիության բարեխնամ հովանավորությամբ:

Ինքս վեց ամառ աղրել եմ այնտեղ: Այն ժամանակ սիրում էի զբաղվել նաեւ քարտեզագրությամբ: Եվ 1944-ի ամռանը ինձ հանձնարարվեց քարտեզագրել վանքաղաքական մեծ կալվածը, որ վանքի հետեւի բարձունքներից տարածվում էր մինչեւ ծով: Չգիտեմ ինչ ճակատագիր է ունեցել իմ կազմած այդ մանրամասն քարտեզը, որ պետք է պահվեր Նիկոսիայի Հայկական ակումբում, գիտեմ միայն, որ թուրքերը 1974-ին գրավել են նաեւ հայոց եկեղեցու մոտ ակումբն ամբողջ թաղամասի հետ (ի դեղ, մոտ քառասուն ոտք «ընկել» է չգրավված Մելգոնյանի տարածքում): Բայց ահա հին թղթերիս մեջ գտել եմ այդ քարտեզիս հատակագծային փոքր ուրվագրությունը: Արդյո՞ք միայն սա է մնացել կալվածի անկատար վկան...

Երբ 1960-ի ամռանը ամոլամած Ռիգայում գրում էի «Կարոտի պատարագը» պատմվածքը (լրիվ բնագիրը 1991-ին միայն լույս տեսավ «Գարուն» ամսագրում), որի հերոսը վանքի այգեղան Հեթում աղբուրն ամեն կիրակի առավոտ Կիլիկյան դիտարանի գագաթին իր «կարոտի պատարագն» է անում, նայելով իր կորուսյալ աշխարհ Կիլիկիային, իմ սեփական կարոտի ուժով էլ աչքիս վերակենդանանում էր իմ պատանեկության հարազատացած աշխարհը Սուրբ Մակարա վանքով: Իսկ երբ տասնամյակներ հետո բախտ ունեցա կրկին լինելու Կիպրոսում, հեռվից միայն կարող էի նայել կատաղամանուշակագույն Կիլիկյան դիտարանի գագաթին, ու տարիների հեռվից միայն, ու դարձյալ կարոտի աչքով, պատկերացնել իմ պատանեկության այդ աշխարհը, որ ինձ համար էլ, մեզ համար էլ, դարձել էր կորուսյալ աշխարհ: Թուրքերի ռազմականացած սահմանից անդին էր: Հարցնում էի վանքի մասին: Ստույգ բան չգիտեին: Ոչ ոք չէր կարող այդ սահմանից անդին գնալ: Ոչ իսկ հյուսիսից փախստական երկու հարյուր հազար հույները, որոնք գաղթական էին դարձել իրենց իսկ երկրի հարավում: Ասվում էր, որ Թուրքիայից բազմահազար գյուղացիներ են վերաբնակեցվել Հյուսիսում, գուցե մեր վանքում էլ տեղավորվել են այդ ոչխարները...

Եվ ահա այս լուրը, այս գույժը դիմա: Թալանը հասկացանք, բայց ինչպե՞ս բացատրել անիմաստ, անհեթեթ քանդումը, եթե դա նոպատակադրված չէ: Արեւմտյան Հայաստանում այնպիսի արժեքներ ոչնչացրին Տեկոր, Խցկոնք եւ այլք, բանը հասավ Կիպրոսի՞ն, ուր դեռ կա: Իսկ ո՞ւր են «մարդկային իրավունքներից» բարբառողները, որոնք, ինչքան գիտեմ, պատմամշակութային արժեքների ոչնչացումն էլ ցեղասպանություն են համարում: Բայց մի զուտ մարդկայնորեն «մխիթարական» կետ կար լուրի մեջ. կիպրացի հնաբնակ թուրքերն էլ իրենց մամուլով ընդվզել են այդ բարբարոսության դեմ: Եթե դա ընդունենք որպես մխիթարանք: Այրած սրտի...

ԿԱՐՊԻՍ ՍՈՒՐԲԵՆՅԱՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

«Ո՛չ նավթ, ոչ բամբակ, այլ մարդ...»

Մեծ հայասերներդ երբեք չեն մոռացվի

Հայոց պատմության նորագույն շրջանի մռայլ ու մղձավանջային տարիներին գտնվեցին տարբեր ազգության մարդասերներ, որոնք իրենց ողջ կարողություններով զորակից եղան եղեռնազարկ հայ ժողովրդին: Նրանց շարքում իր հավերժական ներկայությունն ունի գերմանացի գրող, հրապարակախոս, հումանիստ Արմին Թեոֆիլ Վեգները, որը հանուն հայության վերածննդի արեց առավելագույնը: Իր գիտակցական ողջ կյանքի ընթացքում Վեգների սիրտը ապրեց ու տրոփեց Հայաստանով, հայկական հուզախռով տագնապներով: Ուստի բնավ էլ չափազանցված չէ այն խորունկ սերն ու պաշտամունքը, որ հայության երախտապարտ սերունդները տածում են մեծ հումանիստի հիշատակի հանդեպ: Այդ ուշադրության եւ հոգատարության եւս մեկ վկայությունն է վերջերս Ազգային հարցի եւ գենոցիդի ուսումնասիրման կենտրոնի հրապարակած «Արմին Վեգները եւ էռնեստ Վերները հայոց ցեղասպանության մասին» գրքույկը: Այն ներկայացնում է Արմին Վեգների բաց նամակը ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնին՝ հայ ժողովրդին անպատաս տեղահանելու մասին, եւ Լայպցիգի համալսարանի պրոֆեսոր էռնեստ Վերների «1915-16 թվականներին հայկական սարսափներն արդյո՞ք հայկական հնարանք են» աշխատությունը, որոնք հայերեն ամբողջականորեն ներկայացվում են առաջին անգամ:

Գերմաներենից թարգմանել եւ առաջաբանները գրել է պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր Ստեփան Ստեփանյանը, որը բավական երկար ժամանակ աշխատել ու բացառիկ կարեւոր նյութեր է հայթայթել գերմանական (նախկին ԳԴՀ-ի) արխիվներից: Առաջաբանում պրոֆեսոր Ս. Ստեփանյանը նշում է, որ մեծ հայասեր Ա. Վեգները երկու անգամ 1927 թ. եւ 1968 թ. այցելել է Հայաստան: Վերջին այցելության ժամանակ Ա. Վեգները եղավ Ծիծեռնակաբերդում եւ ծաղկեփնջակ դրեց Հայոց ցեղասպանության զոհերի հուշարձանին: Հայաստանը հոգեհարազատ ու հիշարժան էր նրա հանդիպումը երեւանի պետհամալսարանում: Հիացած հայ ժողովրդի այս նորօրյա վերածննդով, Ա. Վեգները ասել է. «Երբ դիմացն Արարատն է եւ Ծիծեռնակաբերդի վրա անցյալը հիշեցնող մշտավառ բոցը, հայն այստեղ է եւ իր ճակատագրի տերն է»: Իր բաց նամակում Վեգները ԱՄՆ-ի նախագահին շարադրում է Առաջին աշխարհամարտի տարիներին պատերազմին պատշաճաբար չմասնակցած հայ ժողովրդի կրած ու ապրած պատմության մեջ իր նախադեմը չունեցող ողբերգության ողջ խորությունն ու ամբողջականությունը: Նա հետեւյալն է նշում. «Պարոն նախագահ, հոյաշնությունս թույլ չի տալիս ինձ խնդրելու իմ ժողովրդի համար: Ես չեմ տարակուսում, որ նա, չնայած իր ցավին, զոհողության գնով, իր մեջ ուժ կգտնի մասնակից լինելու աշխարհի առաջի փրկությանը: Սակայն հայ ազգին, որին սարսափելի վիրավորել են, ես ցանկանում եմ պաշտպան կանգնել, որովհետեւ եթե պատերազմից հետո էլ շարունակվեն նրա տառապանքները, նա ընդմիշտ կորված կլինի»:

Վեգները համոզված պնդում է, որ «չի կարելի մեծ պետությունների եսամոլական ծրագրերի եւ հավակնությունների պատճառով հետին պլան մղել փոքր ժողովրդի առաքան: Պարոն նախագահ, փրկեցեք եվրոպայի պատիվը»: Սակայն մեծ մարդասերի աղաղակը ի զորու չեղավ զգաստացնելու մարդկության խիղճը: Եվրոպայի պատիվը չփրկեցին ոչ Վ. Վիլսոնը, ոչ մյուսները:

Հայ ժողովուրդը մինչեւ վերջ մնաց խոշոր տերությունների զավթողական, աշխարհակալ նկրտումների զոհը:

Այդ ազդու փաստաթղթում, ի լուր աշխարհի, Ա. Վեգները հայտարարում էր. «Ոչ նավթ, ոչ բամբակ, այլ մարդ»: Սակայն այդ եղեռնական ժամանակներից մինչ այսօր, երբ մարդկությունը թեւակոխում է 21-րդ հարյուրամյակը, փոքր ժողովուրդների ճակատագիրը որոշվում է ոչ թե ազգերի ինքնորոշման սկզբունքով ու արդարությամբ, այլ օգտակար հանածոների, բնական հարստությունների գոյության փաստով:

Վկա՝ Արցախյան հերոսամարտի շուրջ սարվող անամոթ առուծախը, որին մասնակից են դարձյալ աշխարհի բոլոր մեծ տերությունները:

ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Միջազգային

ՖՐԱՆՍԻԱ

Լը Պենի կարծիքով, Ժակ Շիրակի թիկունքին կանգնած են իրական կազմակերպություններ

«Ինչո՞ւ է Շիրակը շարունակ հրաժարվում ձեզ հետ համագործակցելուց, այսպիսի հարցադրումով ժուռնալիստներ Նիկոլա Դոմենախը եւ Մորիս Սցաֆրանը դիմեցին Ժան Մարի լը Պենին: Ազգային ճակատի նախագահի դասախանը զետեղված է «Մի նախագահի վեդ» գրքում, որը ներկայացնում է Ժակ Շիրակի քաղաքական ուղին 1988-ի ընտրություններից մինչեւ 1995-ի մուտքը Ելիսեյան պալատ: Ժուռնալիստների կարծիքով, լը Պենի պնդումները իրական դավադրության մասին օդում ասված բառեր չեն:

Լը Պենը հայտնում է, որ իրեն վաղուց էր մտահոգում Շիրակի բնամական վերաբերմունքը. «Ո՞րն է պատճառը, այդ ամենի ետեւում թաքնված է մի հզոր կազմակերպություն, մի գաղտնիք, խոսքում, որը Շիրակը չի կարող բացահայտ հայտնել:

Ամեն անգամ, երբ նրա ձեռքում իշխանություն էր հայտնվում, նա առիթը բաց չէր թողնում ինձ ճնշելու: Նրա ուղեղում մեկընդմիշտ դաջված է լը Պենը բացարձակ չարիք է: Եվ բարոյականությունը դաղարում է գոյություն ունենալուց, երբ պայքար է ծավալում իմ դեմ: Ինձ անհանգստացնելու համար, նա անընդհատ հարկային հանչությունն է լարում իմ դեմ: Բայց, գրողը տանի, ո՞ւմ է պետք այդ ամիսաս բնամանքը, մանավանդ որ դրա հետեւանքով Շիրակը զրկվում է մեր կողմնակիցների ձայներից: Այս հարցին առ այսօր Շիրակը բավարար պատասխան չի տվել: Ես սիրված եմ ենթադրություններ անելու, որոնցից ամենահավանականն այն է, որ Շիրակի ետեւում ինչ-որ մեկը կանգնած է: Ո՞վ: Հրեական կազմակերպությունները, մասնավորապես հայտնի «Բնայ Բրիսը» (Եղբայրների միություն), որը խոշոր գումարներ եւ միջազգային օժանդակություն է տրամադրել Շիրակին, փոխարենը վերջինս համաձայնել է թեկուզեւ տանուլ տալ 1988-ի ընտրությունները, բայց չդիմել իմ օժանդակությանը»:

Այս ընդհանուր մեղադրանքներից հետո Ազգային ճակատի նախագահը ավելի է մանրամասնում ասածը: «Երկար ժամանակ ես կարծում էի, որ այս ասելությունը Շիրակի մտերիմ ընկերոջ Ֆրիդմանի ազդեցությունն է: Այդ Ֆրիդմանը, կարելի է ասել, ֆիզիկական զգվանք է տածում իմ եւ ընկերներիս նկատմամբ: Հետո ես կարծում էի, որ դրանք նրա մյուս ընկերոջ Միշել Բարցախի (առողջապահության նախարար 1986-88) կազմակերպած գործերն են: Բայց ոչ: Ասեմ ավելին, այդ կազմակերպության հետ իսկական պայմանագիր է կնքված, որը փաստորեն իրագործվեց Շիրակը դարձավ նախագահ»:

Ֆրանսիայի հիմնական կուսակցությունների եւ հրեական կազմակերպությունների միջեւ գոյություն ունեցող համաձայնությունը վերջին տասը տարիների ընթացքում առնընդհատ քննարկվում է աջ ծայրահեղականների թերթերում, մասնավորապես, «Պրեզանս» պարբերականում: Վերջինս մեջ է բերում 1986 թ. մարտի 26-ին «Մոնդ» թերթում տպագրված մի հոդված, որ «Բնայ Բրիսը» կոչ է անում Ֆրանսիայի հիմնական կուսակցություններին դեմ դուրս գալ ծայրահեղական եւ խսենոֆոբիսական գաղափարներին: Այս կազմակերպությունը հիշեցնում է «քաղաքական կուսակցություններին «Բնայ Բրիսի» համաժողովում ստանձնած պարտավորվածությունը՝ ոչ մի դեպքում չհամագործակցել Ազգային ճակատի հետ: Այսքանը բավական էր աջ ծայրահեղականների վաղեմի զառանցանքին նոր շունչ հաղորդելու համար նորից հրեամասոնական դավադրություն: Սա խագահը ակամա խոստովանում է ֆաշիզմի եւ եւ լրենիզմի ընդհանրությունները: «Հանրապետական կուսակցությունը ստեղծելով Շիրակը վերականգնեց գոլիստական շարժումը: Այս գաղափարը նրան թելադրված էր դրսից: Այս պիսով, Հանրապետական կուսակցությունը ձախ թեւն անցավ եւ, ընդհանրապես, ողջ քաղաքական համակարգը տեղաշարժվեց դեպի ձախ: Դա էր «Բնայ Բրիսին» տված նրա խոստումը՝ չխախտել Ազատագրումից հետո հաստատված «ավարաբաշխության» կարգը: Նախկինում Դիմադրությունը կազմող կուսակցություններն իրենց ձեռքն առան իշխանության բոլոր լծակները: Նոր ուժերի մուտքն արգելված է»:

Պարզվում է, որ լը Պենը Ազգային ճակատը դատում է Դիմադրությունից դուրս գտնվող ուժերի շարքը, այսինքն պետականաների եւ նացիստական Գերմանիայի գործակից:

«ՍՈՆՈ»
3 մարտ 1997 թ.

ԱՆԿԱՐԱ

Եվրամիություն-Թուրքիա փոխհարաբերությունները երկակի բնույթ են կրում

«Բարորությունը» անդամակցության հարցում հակադրվում է Չիլլերին

Մարտի 15-ին Թուրքիայի արտգործնախարար, փոխվարչապետ Թանսու Չիլլերը երկօրյա աշխատանքային այցով մեկնել էր Հոլանդիա: Այցի համար առիթ էր ծառայել եվրամիության արտգործնախարարների խորհրդաժողովը, որ գումարվեց հոլանդական Ամելդոռն քաղաքում: Մարտի 17-ին, վերադառնալով Անկարա, Չիլլերը հրավիրել է մամուլի ասուլիս, որտեղ էլ նա հայտարարել է. «Թուրքիայի փոխհարաբերությունները ԵՄ-ի հետ հունի մեջ են մտել: Սա չափազանց կարեւոր ձեռքբերում է, քանի որ վերականգնվել են եվրոպական այդ կազմակերպությանը անդամակցելու Թուրքիայի հնարավորությունները»: Միաժամանակ Չիլլերն իր գոհունակությունն է հայտնել խորհրդաժողովում Հունաստանի որդեգրած դիրքորոշման առնչությամբ, ինչը, նրա վկայությամբ, նպաստել է լարվածության թուլացմանը ԵՄ-Թուրքիա փոխհարաբերություններում:

Ինչպես հայտնի է, վերջերս եվրախորհրդարանում քրիստոնեա-դեմոկրատական կուսակցությունների ներկայացուցիչները, հանդես գալով հայտարարությամբ, անընդունելի էին համարել Թուրքիայի անդամակցությունը ԵՄ-ին: Սա եկել էր սրելու ԵՄ-Թուրքիա փոխհարաբերություններում տիրող լարվածությունը: Չիլլերը մամուլի ասուլիսում անդրադարձել է քրիստոնեա-դեմոկրատների հայտարարությանը եւ լարվածության առնչությամբ շատ խիստ ոճով մեղադրել է Գերմանիային: Ինչ վերաբերում է կանցլեր Հելմուտ Քոլին, ապա Չիլլերը նրան համարել է ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության մեծագույն խոչընդոտը:

Թուրքիան ԵՄ-ի հետ, ինչ խոսք, վատ հարաբերությունների մեջ է: Թերեւս բարդության հիմքում, ինչպես այդ մասին նշել էր Անգլիայի արտգործնախարար Մալքոլմ Ռիֆքինդը, ընկած է դրանց երկակի բնույթը: Ըստ երեւույթին, այդ հարաբերություններին միանշանակ չի կարողանում մոտենալ նաեւ պաշտոնական Անկարան: Այդ մասին մեզ հուշում է Մեջլիսում «Բարորություն» կուսակցության պատգամավորական խմբակցության խոսնակ Սուլեյման Արիֆ էմրեն: Երբ Չիլլերն իր գոհունակությունն է հայտնում, թե ԵՄ-Թուրքիա փոխհարաբերությունները կարգավորվում են, ահա էմրեն դատարտում է տվյալ կազմակերպությանը Թուրքիայի անդամակցության ջանքերը, պատճառաբանելով, թե. «Եվրամիությունը ծառայում է եվրոպայի միացյալ պետություն ստեղծելու գաղափարին: Անդամակցել այդ կազմակերպությանը, նշանակում է խաչ քաշել Թուրքիայի ինքնիշխանության վրա»: Էմրեի վերոհիշյալ խոսքերը չափազանց խորհրդանշային են: Դրանք ոչ միայն գալիս են հաստատելու Ռիֆքինդի՝ ԵՄ-Թուրքիա հարաբերությունների երկակի բնույթի մասին կարծիքը, այլեւ երեւան են հանում Թուրքիայի վարչապետ Նեջմեթթին Էրբաքանի կառավարող կոալիցիայի մաս կազմող «Բարորություն» եւ «Ճշմարիտ ուղի» կուսակցությունների հակասությունները: Ի դեպ, դրանք ոչ միայն ԵՄ-ի հարցում են դրսեւորվում:

Հ. Ղ.

ԲԱՐՁՐԱՇԽԱՐՀԻԿ

Մեծահարուստներն արդեն պատրաստվում են դիմավորելու նոր հազարամյակը

Զվարճասեր մեծահարուստների համար, ովքեր Նոր տարվա տոնական օրերը նախընտրում են անցկացնել օտար երկրների չքնաղ տեսարժան վայրերում, մտահոգության լուրջ թեմա է երեսուներեք ամիս անց 1999 թվի դեկտ. 31-ը որտեղ անցկացնելու խնդիրը. քանի որ ըստ «Նյուզուիք» հանդեսի փետրվարի 24-ի համարի տվյալների. Նյու Յորքի «Ռեյնբոու Ռում», Փարիզի «Ռից», Լոնդոնի «Սավոյ» եւ Սեաթլի գերարդիական «Սփեյս նիդլ» հյուրանոցներն այժմվանից արդեն «Բուքդ ափ». այսինքն լեփ-լեցուն են եւ ազատ սենյակներ չունեն: Իսկ ծրագրավորել անելիքն այսքան վաղ, հատկապես բիզնեսմենների համար, որոնք չգիտեն, թե ինչ է պատասխանում իրենց մոտ առյուգայում, այնքան էլ հեշտ չէ: Ոչ էլ ձեռնտու:

Բայց հուսահատվել պետք չէ, քանի որ «Թայմս սքվերի» նման շատ ճանաչված հրապարակներ դառնալու են զանգվածային ուրախության եւ կերուխումի վայրեր: Քաղաքապետարաններն այժմվանից ծրագրում են դրանցում կազմակերպել 24-ժամյա տոնակատարություններ, որոնց ընթացքում տեսաժապավենների օգնությամբ հանդիսատեսները «տեղափոխվելու են այլ երկրներ կամ քաղաքներ, եւ «մասնակցելու» են ճոխ երեկույթների կամ ցերեկույթների:

Շրջագայություններ կազմակերպող ընկերությունները հաճույքով մարդկանց առաջնորդելու են բառացիորեն աշխարհի ցանկացած ծայր՝ իհարկե համապատասխան նյութական վճարումների դիմաց: Չիկագոյում գործող Աբերկրոմբի եւ Քենթ ինտերնեյշընլը Լյուքս ճանապարհորդությունների գրասենյակի առաջարկած «բեժ կետերի» թվում են Անտարկտիկան, որտեղ սառցաբեկորների գրկում կենացներ խմելու կարելի է գնալ «Էքսպլորեր» նավով (տոմսի արժեքը 5210 դոլար), Վիեննայի «Իմպերիալ» հյուրանոցը, որտեղ ղարահանդեսների սիրահարներին սպասում է «Հազարամյակի վալսը» շոու-ծրագիրը, իսկերի նախկին օրան Մազու-Փիզու քաղաքը, որտեղ յուրահատուկ փառատոն է կազմակերպվելու. Թաջ Մահալը, որտեղ Մահառաջային վայել խնջույք է պատրաստվելու, Ռիոն, որտեղ գոհաբանական աղոթք է ասվելու արարչության ասպվածուհի Յամանջային. Բրազիլիան, Ամազոնը եւ իհարկե Կահիրեի բուրգերը:

Ֆլորիդայի բնակիչ, իրավաբան եւ ավիաքռիչների սիրահար Դոնալդ Պեւսները, մյուս կողմից, մշակել է չորս տարբեր քաղաքներում նոր տարին դիմավորելու մի «աշխույժ եւ զվարթ» ծրագիր: Էր Ֆրանսի «Կոնկորդ» չարտերային ինքնաթիռով նա պատրաստվում է իր ուղեւորներին նախ հիացնել Փարիզով (Ֆրանսիա), առա Ջենդերով (Ֆրանսիա), Վանկուվերով (Կանադա) եւ Կոնայով (Հավայան կղզիներ): Ութ հազար վեց հարյուր ութսունվեց մղոնանոց այս ուղեւորության համար 80 հոգի արդեն արձանագրվել են առաջարկված հաճույքի դիմաց վճարելով 65 հազարական դոլար: Այլ միջոցառումներից հիշատակության արժանի են Վաշինգտոնի «Հազարամյակի ընկերության» կազմակերպած «Բարեգործական պարահանդեսը», որը նախատեսվում է անցկացնել միաժամանակ աշխարհի տարբեր հիշարժան վայրերում, այդ թվում նաեւ Եգիպտոսում. Մեծ բուրգի՝ Քեոփսի հարեւանությամբ, որտեղ ժամանակին Կեսարն է եղել եւ Նաղոլեոնը: Ավելի «համեստ» Նոր տարի անցկացնողների համար բրիտանացի իմպրեսարիո Բրուն Պիկը առաջարկում է հրավառություններով «լուսավորել երկրագունդը» եւ նոր հազարամյակը դիմավորել միջազգային համերաշխության, ընկերության եւ խաղաղության նորացած հույսերով:

«ԵՅՈՒՇՈՒԹՅՈՒՆ»

ՀԱՄԱՌՈՏ

Ճապոնացիները եւս կօգտվեն նավթից

ԲԱՔՈՒ, 18 ՄԱՐՏ, ՓԱՍՏ: Ադրբեջանի նավթային պետական ընկերության ղեկավար Ն. Ալիեւը տեղեկացրել է, որ ընկերությունը եւ ճապոնական նավթային 4 ընկերություններ ստորագրել են փոխըմբռնման հուշագիր: Ալիեւը նաեւ նշել է, որ Ադրբեջանն իր գոհունակությունն է հայտնում նավթային կառույցները նաեւ ճապոնացիների ջանքերով հետագոտվելու փաստի առթիվ: Ալիեւի ղեկավարած եւ ճապոնական ընկերությունների միջեւ բանակցություններ էին վարվում դեռեւս 1996 թվականի մայիսից:

Բանակցությունները կշարունակվեն եւս 5 ամիս՝ մինչեւ հիմնական հանդիպումների ու փաստաթղթերի նախապատրաստումը, որից հետո արդեն կստորագրվի գլխավոր փաստաթուղթը՝ փոխշահավետ պայմաններով:

Իտալիայում ձերբակալվեցին ռուսական մաֆիայի անդամներ

17 ՄԱՐՏ, «ԱՅՍՏՈՒԹՅՈՒՆ»: Իտալիայի հյուսիսում գտնվող «Մադոննա դի կամպիլյո» հանգստավայրում այսօր ձերբակալվեցին ռուսական մաֆիայի 10-ից ավելի անդամներ, որոնք մեղադրվում են մի շարք հանցագործություններ կատարելու մեջ: Ոստիկանությունը մանրամասներ չի հաղորդել:

Ռուսաստանցիների 48 տոկոսը կողմ է Լենինի վերաթաղմանը

17 ՄԱՐՏ, VOA: Ըստ սոցիոլոգիական նոր հարցման, Ռուսաստանի բնակչության 48 տոկոսը համարում է, որ Լենինը պետք է վերաթաղվի գերեզմանոցում: Սակայն «Հասարակական կարծիքի ռուսաստանյան հիմնադրամի» կողմից երեկ հրապարակված հարցախույզի արդյունքների համաձայն՝ հարցվածների 38 տոկոսը համարում է, որ կարիք չկա անհանգստացնելու մահացածներին եւ համաշխարհային հեղափոխության առաջնորդի զմռսված մարմինը թող շարունակի մնալ դամբարանում:

Գործազուրկների թիվը Ռուսաստանում հասել է 6,9 միլիոնի

ՄՈՍԿՎԱ, 17 ՄԱՐՏ, ՆՏ: ՌԴ վիճակագրության պետական կոմիտեի տվյալներով, գործազուրկների թիվը Ռուսաստանում հասել է 6,9 միլիոնի եւ ներկայումս գործազուրկները կազմում են Ռուսաստանի աշխատունակ բնակչության 9,5 տոկոսը:

digitised by A.R.A.R.@

Ռուդոլֆ Խաչատրյանի առաստղները Մոսկվայի Տրետյակովյան պատկերասրահում

Ռուդոլֆ Խաչատրյանի «բազմաչափ օբյեկտներին», որի հոբելյանական ցուցահանդեսը ընթանում է հանրահռչակ Տրետյակովյան պատկերասրահում, կարելի է նայել եւ վերեւից, եւ ներքեւից, եւ կողից: Բացի դրանից, հանելուկային ֆիգուրները շարժվում են իրենց առանցքի շուրջը, սվերներով խաղալով: Քանդակային կոմպոզիցիաները գունազարդված են:

Խաչատրյանը տիրապետում է երեւակայելի ու աներեւակայելի նվագների, որոնք հատուկ են ամենազանազան ուղղությունների դասականից մինչեւ ավանգարդի հայտնի նկարիչներին: Նկարչի անձը բազմաթիվ վեճեր է առաջացնում:

Տրետյակովյան պատկերասրահում ներկայացված են նրա տարբեր ժամանակների գործերը գրաֆիկա, կերպարվեստ, քանդակագործություն:

60-ական թվականներին Խաչատրյանը ստեղծում էր անցքերով քանդակներ: Դատարկությունները մարդկային ֆիգուրներին միացնում էին տիեզերքի հետ...

Եվ հանկարծ նկարչի ստեղծագործությունում սկսվում է մի նոր փուլ: Նա սկսում է նկարել դարշնագույն ներկով, որի շնորհիվ նրա հոգեբանական դիմանկարներին բնորոշ է դառնում առանձնատես նուրբ ոճաբանությունը. Ռենեսանսից հետո ինչպես միահյուսվելով, ճակատագրերի գծերը նոր կյանք են առաջացնում:

Ռուդոլֆ Խաչատրյանի երեւակայական աշխարհները եւ առաստղները շատ համոզիչ են: Նկարիչը նորից ու նորից միտքը ձեւավորում է կտավի վրա, պատկերում է ոչինչը կամ ամեն ինչը:

Հավանաբար, Ռուդոլֆ Խաչատրյանի ստեղծագործական ուղու փուլերը այդպես զանազան են նաեւ այն պատճառով, որ նրա ճանաչարիը բարդ է: Սկզբում Երեւանը, հետո Մոսկվան, այնուհետեւ Լոնդոնը եւ այժմ նորից Մոսկվան: Այդպես էր որոնում իրենը: Նրա գործերի եռանդուն ֆանտաստիկան չունի ոչ ժամանակային, ոչ աշխարհագրական սահմաններ:

«ՆՈՎՈՅԵ ՎՐԵՄՅԱ», ՄՈՍԿՎԱ

ՀԱՅ ԴԱՏ

Ջեկ Գեւորգյանի արտառոց ցուցահանդեսը



Հանրահայտ ամերիկահայ բժիշկ Ջեկ Գեւորգյանը նախորդ շաբաթավերջին Միչիգանում կազմակերպել է մի ցուցահանդես, որտեղ ցուցադրվում են Հայկական ցեղասպանությանը վերաբերող հեղինակային կտավները՝ նկարված իր իսկ արյամբ:

Ջ. Գեւորգյանը, որ մինչ այսօր Հայ դատի շուրջ այս ասպիճան հրապարակային եւ ցնցող հայտարարություններ չէր կատարել, իր ցուցահանդեսով միեւնույն շարքին է դասել թուրքերին ու նացիստներին: Նա հայտարարել է, որ Հայկական ցեղասպանությունը հրեական ողջակիզման մակարդակի ոճիր էր, եւ այդ իսկ պատճառով չպետք է մոռացության մատնվի:

Հեղինակը որոշել է չվաճառել իր կտավները, այլ պարբերաբար պետք է ցուցահանդեսներ կազմակերպի, որպեսզի միշտ օրախնդիր մնա Ցեղասպանության հարցը: «ԵՐԵՎԱՆ»

Փարիզում կբացվի Անիին նվիրված ցուցահանդես

ԵՐԵՎԱՆ, 18 ՄԱՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Փարիզի «Պալե դե Շայո» նշանավոր սրահում Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակի կապակցությամբ կբացվի Բագրատունյաց Հայաստանի մայրաքաղաք Անիին նվիրված ցուցահանդես: Այն կազմակերպված է Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակի հովանավորությամբ: Ցուցահանդեսում կներկայացվեն մանրակերտեր, Հայաստանի պատմության թանգարանում պահվող Անիի պեղումների ժամանակ հայտնաբերված իրեր, արխիվային նյութեր եւ այլն: Հայաստանի ազգային պատկերասրահի տնօրեն Շահեն Խաչատրյանի խոսքերով, այս ցուցահանդեսին չի բացառվում նաեւ Թուրքիայի մասնակցությունը, որին արվել է համապատասխան առաջարկություն: Կցուցադրվեն նաեւ դարասկզբի ականավոր հայ նկարիչ Արշակ Ֆեթվաճյանի Անիին նվիրված ջրանկարների շարքը: Մինչ Փարիզյան ցուցահանդեսը այս աշխատանքները կցուցադրվեն Հայաստանի ազգային պատկերասրահում:

Փարիզյան երեկո՝ Բակունցի հիշատակին

Ֆրանսահայ գրողների ընկերության նախաձեռնությամբ, ՀԲԸՄ-ի «Ա. Մանուկյան» մշակույթի կենտրոնում տեղի է ունեցել դասախոսություն՝ նվիրված Ակսել Բակունցին: Երեւանի բանասիրական ֆակուլտետի շրջանավարտ Էլիզա Մուրադյանը, ներկայացնելով գրողի կենսագրությունը, վերլուծել է բակունցյան ստեղծագործություններում հայրենի բնաշխարհի, կերպարների եւ խորհրդանիշերի գաղտնիքները: Միջոցառման ավարտին ընթերցվել են հատվածներ Բակունցի «Միրհավ» եւ «Ալպիական մանուշակ» պատմվածքներից:

ԿԱՊԵՐ

Մի խումբ հայ ուսանողներ մասնագիտական պրակտիկան անցան Գերմանիայում

ԵՐԵՎԱՆ, 18 ՄԱՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Վերջերս Երեւանի ճարտարագիտական եւ բժշկական համալսարանների, Խ. Աբովյանի անվան մանկավարժական, Վ. Բրյուսովի անվան օտար լեզուների, կառավարման ու ինֆորմատիկայի ինստիտուտների 12 ուսանողներ իրենց մասնագիտական ու լեզվական պրակտիկան անցկացրեցին Գերմանիայի տարբեր քաղաքներում: Այցելությունը կազմակերպել էին Դարմշտադտի Երիտասարդական միությունն ու Երեւանի ճարտարագիտական համալսարանի «Գերմաներեն սիրողների ակումբը»: Ակումբի նախագահ Սուսաննա Ստեփանյանը հայտնեց, որ երկու շաբաթվա ընթացքում հայ ուսանողները իրենց պրակտիկան անցկացրեցին գերմանական տարբեր ֆիրմաներում, դպրոցներում, բանկերում ու այլ հաստատություններում, եղան Հեսսեն երկրի խորհրդարանում, Դարմշտադտի քաղաքագետների միությունում ու տեխնիկական համալսարանում: Քաղաքի Թաղեա համայնքում հայ ուսանողները ներկայացրեցին «Հայաստանը զարգանում է» ծրագիրը, որի ընթացքում ներկայացրեցին Հայաստանի պատմությունը, մշակույթը, հանրապետությանը կյանքի մյուս բնագավառները: Դարմշտադտի երիտասարդական միության նախագահ Ֆրեդհելմ Մենցելի նախաձեռնությամբ, ուսանողները այցելեցին նաեւ Հայդելբերգ եւ Բեռլին:

Ս. Ստեփանյանը հայտնեց, որ ակումբի եւ Դարմշտադտի երիտասարդական միության համագործակցության 6 տարվա ընթացքում հայ եւ գերմանացի ուսանողների միջեւ իրականացվել են նմանատիպ 12 փոխայցելություններ:

Դարմշտադտի երիտասարդական միության փոխայցելությունը կկայանա օգոստոսին, որին կհաջորդի հոկտեմբերի ամսին գերմանացի ուսանողների ծնողների այցելությունը Հայաստան:

Հայ ուսանողը կմասնակցի Կրակովի համաժողովին

Ապրիլի 18-20-ը Կրակովում (Լեհաստան) տեղի կունենա Ֆրանկֆոն ուսանողների համաեվրոպական կոնֆերանս, որին Հայաստանից կմասնակցի Երեւանի պետական համալսարանի ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի ֆրանսիական բաժնի IV կուրսի ուսանող Տիգրան Սահակյանը: Վերջինիս բեկնածությունը հաստատվել է Երեւանում Ֆրանսիայի դեսպանատան եւ Կրակովի ֆրանսիական համալսարանի անցկացրած երկփուլ մրցույթի արդյունքում: Կոնֆերանսում պետք է ննջարկվեն Միացյալ Եվրոպայի ուսանողության խնդիրները, միաժամանակ, նախանշելով այն սկզբունքները, որոնցով ապագայում կառաջնորդվեն եվրոպական երկրների ուսանողները: Կոնֆերանսի օրակարգի շրջանակներում ուշադրություն կդարձվեն նաեւ այնպիսի խնդիրների, ինչպիսիք են ահաբեկչությունը, բնապահպանությունը, տարբեր երկրներում առկա հակամարտությունները:

Համաժողովի արդյունքում կընդունվի համատեղ հայտարարություն, որը կուղարկվի եվրոպական երկրների մամուլի միջոցներին: Ա. Հ.

Հայ մամուլի վերաբերյալ դասախոսություններ ափյուռքում

«Համազգայինի» Հալեղի Նիկոլ Աղբալյան մասնաճյուղի գրական հանձնախմբի նախաձեռնությամբ, «Լեւոն Շանթ» դահլիճում տեղի է ունեցել հայ մամուլին նվիրված դասախոսական շարք:

Սիրիայի հայատառ առաջին թերթի «Ֆրաք»-ի 130-ամյակին եւ Սփյուռքի պատմության վերջին 200 տարիների մամուլին նվիրված դասախոսական այս շարքի առաջին օրը դասախոսել է Միհրան Մինասյանը: Նա ներկայացրել է տեղի կուսակցության երկլեզու «Ֆրաք» (Եփրատ) պատգամաբերի հրապարակմամբ (1867 թ.) սկսված սիրահայության մամուլի պատմությունը, որոնցից շարքում եղել են նաեւ «Արեւելք», «Սուրիա», «Եփրատ», «Նայիրի», «Տաքեւ», «Գեղարդ» եւ 1993 թ. ի վեր՝ «Գանձասար» պարբերականները: Պարզվում է, որ այսօր սիրահայ մամուլն ունի 150 անուն պարբերական:

Դասախոս Լեւոն Շառոյանն անդրադարձել է արտասահմանի հայ մամուլի ներկա վիճակին, մասնավորապես Միջին Արեւելքի, Եվրոպայի եւ Ամերիկայի հայկական մամուլի բոլոր անուններին: Դասախոսը պարզաբանել է հայ մամուլի ազգային դերը բնորոշող մի շարք խնդիրներ:

Իշխան Չիֆթչյանը դասախոսել է հայ հոգեւոր եւ կրոնական մամուլի մասին: Նա արժեւորել է կրոնական բնույթի պարբերականները՝ շեշտելով վերջիններիս նպաստը հաստատության հոգեկան զարթոնքի եւ բարոյական ընթացքների հունավորման գործում:

Միջոցառման առթիվ հրատարակվել է նաեւ 26 էջից բաղկացած գրքույկ՝ հայ մամուլի երկդարյա պատմության համառոտ ամփոփումով: «ԵՐԵՎԱՆ»

Լեդի Դիանան փոխում է իր խորհրդագիրը եւ խուսափում դատարանում վկայություններ տալուց

Արքայադուստր Դիանան իր նամակների եւ ծրարների նոր խորհրդագիր (լոգո) է ընտրել նրբագեղ մուգ կապույտ մեծատառ D-ն, որը փոխ է առել իր ընտանեկան Սփենսրների թագից: Չնայած նա մինչեւ այժմ կրում է Ուելսի արքայադստեր տիտղոսը, այնուամենայնիվ, հրաժարվել է իր նախկին ամուսնու Ուելսի արքայազնի թագը խորհրդանշող փետուրներից, որոնք ձեւավորում էին նրա թղթակցությունների նախկին խորհրդագիրը: Լոնդոնի «Թայմսը» նկատում է, որ նոր խորհրդագրի ընդունման պատճառը Դիանայի օֆիսի տեղափոխումն է Սանկտ Ջեյմս Փելիսից Քենինգտոնյան պալատ, որտեղ արքայադուստրն այժմ բնակվում է: Այսուհետ, նոր խորհրդագիրը կմատնանշի արքայադստեր նոր օֆիսի հասցեն:

Միեւնույն ժամանակ, ինչպես հաղորդում է «Ինքերենյշնլ հերալդ տրիբյուն» օրաթերթը, Դիանայի նախկին սպասուհուն դատական մեղադրանք է ներկայացվել, սակայն արքայադուստրը համաձայնություն է տվել դատարանից դուրս խնդրի կարգավորմանը՝ խուսափելով բաց նիստում վկայություններ տալուց: Դիանայի եւ սպասուհի Սիլվիա Մաֆերմոթի իրավաբանների բանակցությունները կսկսվեն Լոնդոնի արդյունաբերական տրիբունալում: Երկու կողմերն էլ համաձայնվել են չհրապարակել համաձայնության ժամկետները: «Ես բավարարված եմ: Դա կարելի է նմանեցնել վիճակախաղում հաղթելուն», ասել է 44-ամյա Մաֆերմոթը: Թերթը հավելյալ մանրամասներ չի հաղորդում դատական մեղադրանքի վերաբերյալ:

ԱԲ. Մ.

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մարզական

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

Անդրանիկ Ադամյան. «Իսկական ֆուտբոլը ծնվում է պայքարում»

«Առաջ եւ պայքար», իր սաներին կոչ է անում «Շիրակի» ավագ մարզիչը

Անդրանիկ Ադամյանը հայկական ֆուտբոլի եզակի երկարակյաց մարզիչներից է: Նրա ղեկավարությամբ «Շիրակը» դարձել է Հայաստանի ֆուտբոլի մրցաշարերում տոն տվող գլխավոր թիմերից մեկը: Գյումրեցիների մարզչին հանդիպելով վերջերս հանրապետական ֆուտբոլի ֆեդերացիայում կայացած Հայաստանի գավաթի խաղարկության քառորդ եզրափակիչ փուլի վիճակահանության ժամանակ, չկորցրեցինք առիթը եւ հրավիրեցինք հարցազրույցի, որտեղ շոշափվում են ոչ միայն «Շիրակին», այլեւ ընդհանրապես հայրենական ֆուտբոլին վերաբերող մի շարք հարցեր:

ՏՐԱՅԲ ՆԱԶԱՐՅԱՆ

– Ինչպե՞ս «Շիրակի» ֆուտբոլիստներն անցկացրեցին ձմեռային դադարը եւ ի՞նչ տրամադրությամբ են դիմավորում գարնանային խաղաշրջանը:

– Թիմը բավականին շուտ սկսեց նախապատրաստությունը նոր մրցաշրջանին: Ձմեռային արձակուրդները շատ կարճ տեւեցին: Սկզբում եղանակը բարենպաստ էր բացօթյա պարապմունքների համար: Սակայն աստիճանաբար ձմեռը զգացնել տվեց եւ ստիպված տեղափոխվեցինք դահլիճ, որտեղ մարզումները հեռու էին լիարժեք լինելուց: Կարճ ասած, տեղում մարզումներն անցկացրեցինք մի կերպ «յոլա տանելով»: Դրությունը բարդանում էր նաեւ նրանով, որ «Շիրակի» մարզադաշտը ներկայումս վերակառուցվում է, բնականաբար այնտեղ եւս անհնարին էր պարապել: Նախապատրաստական վերջին փուլն անցկացրեցինք Ադլերում: Անընդհատ տեղացող անձրեւը խաղադաշտը ցեխի էր փոխում, այնպես որ, այս ուսումնա-մարզական հավաքը եւս բերի էր: Համակերպվելով ստեղծված իրավիճակին, որոշեցինք օրումեջ ստուգողական հանդիպումներ անցկացնել: Հինգ մրցամարտերը բավականին վերականգնեցին ֆուտբոլիստների ֆիզիկական տվյալները, բայց տեխնիկատակտիկական գործոնները, որոնցից մենք մշտապես կաղել ենք, այդպես էլ չհաջողվեց բարելավել:

Այնուհանդերձ, տղաները մարտականորեն են տրամադրված, ինչը եւ աղացուցեց մեկնարկային մրցամարտը Երեւանի «Արարկիրի» հետ: Կարծում եմ, 10-0 հաշիվը մեկնաբանությունների կարիք չունի: Սակայն ուզում եմ նշել, որ մեր առաջին մրցակիցը հնարավորություն չէր ունեցել հավուր պատշաճի նախապատրաստվելու:

Ինչ մնում է մեր թիմին, ապա նորից ասեմ, որ համապատասխան մարզումային պայմանների դեպքում գյումրեցի ֆուտբոլիստներն ավելի հետաքրքիր խաղ ցույց կտան: Տանկանում եմ նշել նաեւ, որ հնարավորին չափ պետք է հաշվի առնվեն հյուսիսային շրջանների բնակլիմայական պայմանները, եւ մի փոքր ավելի ուշ սկսել Հայաստանի առաջնությունը, որպեսզի այնտեղի թիմերը եւս լիարժեք նախապատրաստվեն առաջիկա պատասխանատու մրցումներին: Ինչպես, այս տարի եւս մեզանից պարզ արդյունքների հասնել եւ երկրի առաջնությունում, եւ գավաթի խաղարկությունում: Սա միայն այս տարվա նոպատակը չէ, այն արդեն անփոփոխ է մի քանի տարի եւ հուսով եմ, առաջիկա տարիներին եւս «Շիրակը» կգրոհի հանրապետական մրցումների «գագաթները»:

– Այս խաղաշրջանում «Շիրակին» կհաջողվի՞ շրջանցել «Փյունիկին»:

– Գարնանային որոշիչ խաղաշրջանը շատ կարճ է: Այս առումով յուրաքանչյուր «սայքարում» կարող է շատ բարձր արժեք ունենալ: Թե ֆուտբոլիստները եւ թե մարզիչները պետք է այս հարցի շուրջ խորհրդակցեն, գան ընդհանուր հայտարարի եւ միայն դրանից հետո մշակվեն առաջնության խաղացանկը եւ մրցակարգը:

– Ձեր կարծիքով, ինչպե՞ս կարելի է վերականգնել հայկական ակումբային ֆուտբոլի երբեմնի համբավը եւ բարձրացնել հետաքրքրությունը երկրի առաջնության նկատմամբ:

– Նախ, նշեմ, որ այսօր գրեթե բոլոր ակումբները ֆինանսական դժվարություններ են կրում: Առաջին հերթին թիմերը մի փոքր պետք է ֆինանսապես հզորանան, որպեսզի ճիշտ կազմակերպվի թե մարզումային գործընթացը եւ թե լուծվեն մի շարք այլ հարցեր: Իմ կարծիքով, բոլոր թիմերը պետք է ունենան իրենց կից մանկական եւ մանկապատանեկան խմբեր, որպեսզի կարողանան դրանց միջից գտնել հեռանկարային եւ տաղանդավոր ֆուտբոլիստներ: Բացի այդ, թիմերի նկատմամբ պետք է պետական հովանավորություն լինի: Յուրաքանչյուր մարզ կամ քաղաք պետք է աջակցի այն ներկայացնող թիմին: Ես համոզված եմ, որ ժամանակի ընթացքում հայկական ֆուտբոլում գումարներ ներդրած անձինք կամ կազմակերպությունները մեծ օգուտ կստանան:

– «Շիրակ» ֆուտբոլային ակումբում գործո՞ւմ է ձեր նկարագրած նախագիծը:

– Այսօր «Շիրակ» ակումբին կից գործում է պատանեկան մեկ խումբ, որի կազմում ընդգրկված են 16-17 տարեկան տղաներ: Այս խումբը անցյալ տարի վերցրեցինք ակումբի հսկողության ներքո եւ շուտով այդտեղից կարող ենք նոր «արյուն» ներարկել թիմի հիմնական կազմ: Մեր հերթափոխային թիմն է նաեւ առաջին խմբում հանդես եկող «Կումայրին»: Տարիներ շարունակ «Շիրակը» երեւի միակ ակումբն է, որ «դրսից» (այլ մարզից) ֆուտբոլիստ չունի եւ հիմնվում է բացառապես տեղական կադրերի վրա: Այդ միտումը շարունակվում է նաեւ այսօր: Մի քանի տարի առաջ թիմը բավականին ծանր ֆինանսական վիճակում էր: Սակայն եվրագավաթներին մասնակցելու շնորհիվ այն մի փոքր բարելավվեց (թեեւ այսօր էլ որոշակի խնդիրներ կան): Այնպես որ եվրոպական մրցաշարերին մասնակցելու մեր դրդապատճառներից մեկն էլ գումարներ վաստակելը եւ դրանք Գյումրիի ֆուտբոլի զարգացմանը ներդնելն է:

– Ո՞րն է «Շիրակի» նշանաբանը:

– «Շիրակի» նշանաբանը միշտ էլ եղել է «Առա՛ջ»: Առաջ եւ պայքա՛ր: Իսկական ֆուտբոլը ծնվում է պայքարում:

ՇԱԽՄԱՏ

Կարեն Ասրյանի առաջին պարտությունը

Կրասնոդարում անցկացվող Գեորգի Սարկիսովի շախմատային հուշամրցաշարի յոթերորդ տուրում անդրանիկ պարտությունը կրեց երեւանցի Կարեն Ասրյանը, որը հանդիպում էր գրոսմայստեր Սերգեյ Ռուբլեւսկու հետ: Ասրա Մինասյանը, Աշոտ Նադանյանը, Անդրանիկ Մաթիկոզյանը, Սամվել Պողոսյանը իրենց պարտիաներն ավարտեցին հաշտությամբ, իսկ Արսեն Ստամբուլյանը հաղթանակ տարավ: Այժմ Ասրյանն ունի 4,5, Մինասյանը՝ 3-ական, Պողոսյանը՝ 2 միավոր: Աղյուսակը 6 միավորով միանձնյա գլխավորում է գրոսմայստեր Պավել Տրեգուբովը:

Հարություն Հակոբյանը՝ ԱՄՆ-ի լավագույն պատանի շախմատիստ

Շախմատի միջազգային ֆեդերացիայի հրապարակած պաշտոնական տվյալների համաձայն, Ամերիկայի Միացյալ Նահանգների այսօրվա լավագույն պատանի շախմատիստը Լոս Անջելեսի «Արմենիա» շախմատային ակումբի անդամ Հարություն Հակոբյանն է: Տաղանդավոր մարզիչ Նշան Քեշիշյանի սանի, որի 16-ամյակը լրացել է հունվարին, միջազգային անհատական գործակիցը հավասար է 2350-ի, եւ ԱՄՆ-ի այդ տարիքի ոչ մի այլ շախմատիստ չունի անգամ Հակոբյանին մոտ ցուցանիշ: Հարությունը մի քանի անգամ նվաճել է ԱՄՆ-ի չեմպիոնի կոչումը տարբեր տարիքային խմբերում, ինչպես նաեւ «Արմենիայի» մյուս սաների հետ մի շարք տպավորիչ հաղթանակներ է տարել թիմային մրցումներում: Գ. Հ.

Առաջատարները երեխա են

Ֆրանսիայում անցկացվող շախմատի միջազգային ներկայացուցչական մրցաշարում առաջատարներն են այս երկրի շախմատային ծագող «աստղ» էթիեն Բաֆրոն, ներկայումս Ֆրանսիան ներկայացնող Իոսիֆ Դորմանը եւ Վիկտոր Կորչնոյը (Շվեյցարիա): Հերթական տուրում 14-ամյա Բաֆրոն անպարտելիորեն զիջեց լատիշ շախմատիստ Իգորս Ռաուսիսին: Դա թույլ տվեց Դորմանին (որն ի դեմ ԽՍՀՄ նախկին չեմպիոն է եւ Գարրի Կասպարովի նախկին մարզիչը) եւ Կորչնոյին հավասարվել էթիեն Բաֆրոյին: Այժմ առաջատարները 4 հնարավորից վաստակել են 3-ական միավոր:

1998 Թ.

Հայ լեռնադահուկորդները կպայքարեն օլիմպիական ուղեգրի համար

Լեռնադահուկային սպորտի միջազգային ֆեդերացիայի կենտրոնակայանից տարածված հաղորդագրության համաձայն՝ 1998 թ. կայանալիք Նագանոյի ձմեռային օլիմպիական խաղերին կարող են մասնակցել այն մարզիկները, որոնք միջազգային այս կազմակերպության հովանու ներքո անցկացված մրցումներում վաստակել են 140 միավոր: Սպորտվարչության լրատվական ծառայությունից տեղեկացանք, որ օլիմպիական ուղեգրի հավակնող հայ մարզիկներից առավել մոտ է երազանքի իրականացմանը ծաղկաձորցի Սեյրան Հարությունյանը, որը վերջերս Իտալիայի Սեստրիերե բնակավայրում կայացած աշխարհի առաջնությունում վաստակել է 138 միավոր: Սեյրանի ճաղոնիա մեկնելու հարցը վերջնականապես կորոշվի ՄՕԿ-ի պաշտոնական գրությունը ստանալուց հետո:

Մեր մյուս լեռնադահուկորդները՝ Արսեն, Արթուր եւ Արման Հարությունյանները դեռեւս կարող են շտկել իրենց գործերը, քանզի առջեւում նրանց մի շարք մրցումներ են սպասում: Մասնավորապես, նրանք ապրիլի 1-5-ը մեկնարկի դուրս կգան Իրանի Դիզին քաղաքում, իսկ նույն ամսի 10-15-ը՝ Թուրքիայի Էրզրում քաղաքում:

ԹԵՆԻՍ

Հերթական անակնկալը չհաջողվեց

Չեխ թենիսիստ Բոգդան Ուլերախը ԱՄՆ Ինդիան-Ուելս քաղաքում կայացած 2 մլն 50 հազար դոլար մրցանակային հիմնադրամով թենիսի մրցաշարի ընթացքում հաղթելով աշխարհի թիվ 1 ռակետ Փիթ Սամփրասին, եզրափակիչում Մայքլ Չանգի հետ մրցամարտում եւս մեծ ցանկություն ուներ անակնկալ մատուցել մարզասերներին ու մասնագետներին: Առաջին իսկ գեյմում նա մրցափուլը հասցրեց հաղթանակի: Երկրորդ սեթում էլ դիմադրում էր մինչեւ 4-3 հաշիվը, սակայն այս անգամ արդեն ամերիկացի թենիսիստը փայլուն ընդունեց չեխի հարվածները: Իսկ այնուհետեւ առանց լուրջ խնդիրների արդացուցեց, որ այնուամենայնիվ, աշխարհի 3-րդ ռակետը ուժեղ է 43-րդից, հաղթելով 4-6, 6-3, 6-4, 6-3 հաշվով: Ի դեմ, Չանգը Ինդիան-Ուելսում հաղթում է երկրորդ տարին անընդմեջ:

ՀԱՍԱՐՈՍ

Մեկնարկային հուզմունքը մնաց հետեւում

Կրասնոդարում եւ Սոչիում երեք հանդիպումներով ավարտվեց ֆուտբոլի Ռուսաստանի առաջնության առաջին տուրը: Սոչիում երկու խաղերում էլ միեւնույն 1-0 հաշիվը գրանցվեց՝ «Ռոստելմաշը» հաղթեց Տյումենի «Դինամո-Գազովիկին», իսկ Սանկտ Պետերբուրգի «Զենիթը» պարտության մատնեց Վորոնեժի «Խիմիկին»: Կրասնոդարում Մոսկվայի «Տորպեդո-Լուժնիկին» 3-1 հաշվով առավելության հասավ Յարոսլավլի «Շինինիկի» նկատմամբ:

Ժելաբերի հաղթանակով

Փարիզ-Նիցցա բազմօրյա հեծանվավազքի հաղթող դարձավ ֆրանսիացի Լորան Ժելաբերը: Իսկ վերջին փուլում անջատ մեկնարկով մրցարշավում գերադասելի էին դիտվում ռուսները: Առաջինը վերջնագիծը հասնելու Վյաչեսլավ Եկիմովը, իսկ երկրորդ արդյունքը ցույց տվեց Եվգենի Բերզինը:

Թաիլանդի հավաքականի հաջողությունը

Թաիլանդի եւ Ճաղոնիայի հավաքականների ֆուտբոլի ընկերական մրցամարտը անախադեմ հաջողություն բերեց թաիլանդցի ֆուտբոլիստներին: Արդեն 17-րդ րոպեին նրանք բացեցին հաշիվը, սակայն խառնդ ժամ անց նրանք սեփական դարպասն ընդունեցին միակ գոլը: Բայց երկրորդ խաղակեսում Թաիլանդի ֆուտբոլիստներն ամբողջովին տիրեցին առավելությանը եւ ճաղոնացիներին ստիպելով եւս երկու անգամ խաղը վերսկսել դաշտի կենտրոնից, հաղթեցին 3-1 հաշվով:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Օրվա հետքերով

ԵՐԵՎԱՆ

Ադրբեջանցի զինվորները խաղաբական ապաստան են խնդրում

Ինչպես արդեն ծանուցվել է մամուլում, այս տարվա փետրվարին եւ մարտին ադրբեջանցի զինվորականներ են անցել Հայաստանի տարածք եւ խաղաբական ապաստան խնդրել: Մարտի 18-ին հայաստանցի մի խումբ լրագրողների նրանց հետ հանդիպելու հնարավորություն տվեց:

Մեր զրուցակիցները ծառայել են տարբեր զորամասերում. Մումբարիս Նասիբովը՝ Նախիջեւանի Բաբեկի շրջանում: Նա Հայաստան է անցել Վայքի մարզով: Իսկ Վագիֆ Թամմազովը ծառայել է Սադարակում, ադրբեջանական դիրքերից ուղիղ անցել է դիմացի հայկական դիրքերը: Առաջինը ծնվել է Մինգեչաուրում, 1976 թվականին, ունի միջնակարգ կրթություն, իսկ խաղաբաղական մասնագիտությամբ վարորդ է: Մյուսը՝ ավարտել է իր հարազատ Ջիջիմլի գյուղի (Աղդամին մոտ գտնվող Արդինի շրջան) ութամյա դպրոցը, ընդհանրապես չէր հաղորդակցվում ռուսերենով, մինչդեռ նրա բախտակիցը, թեեւ ոչ շատ վարժ, սակայն կարողանում էր արտահայտվել:

Նրանց դպրոցից դարձավ, որ Նախիջեւանի տարածքում տեղակայված է ադրբեջանական չորս դիվիզիա՝ 215-րդը, 216-րդը, 217-րդը (որտեղ ծառայել է Վագիֆ Թամմազովը) եւ, այսպես կոչված, Ստեփանակերտի դիվիզիան: Մ. Նասիբովը դպրոցից, որ իրենց զորամասում գտնվում են նաեւ թուրք զինվորներ, որոնց ղեկավարությամբ ադրբեջանցի զինվորականները անհրաժեշտ զինապատրաստություն են անցնում: Իսկ 217-րդ դիվիզիայում թուրք զինվորները հայտնվել են Ադրբեջանում անցկացված ամեն նոր զորակոչից հետո: Բացի այդ, դիվիզիան մշտապես գտնվել է թուրք զինվորականության ուշադրության կենտրոնում: Այնտեղ եղել են եւ թուրքական գեներալներ, եւ բարձրաստիճան սպաներ:

Մ. Նասիբովը պատմում է, որ Հայաստան է անցել Ադրբեջանում տիրող անարդարության պատճառով: Ընդհանրապես զինվորականությունը չի ընդունում Ալիեւի խաղաբականությունը, առավելապես հակված է խաղաղ կեցության: Բանակում, ասենք, անարդարությունն արտահայտվում է հետեւյալ կերպ. հարուստների երեխաները խուսափում են ծառայությունից, եւ բանակային կենցաղի ամբողջ ծանրությունն ընկնում է աղքատների զավակների վրա: Բանակում չծառայելու մեկ օրն արժե 10 հազար դոլար: Ու թեեւ Ադրբեջանում պաշտոնապես ծառայության ժամկետ է սահմանված երկու տարին, սակայն Մ. Նասիբովը ծառայել է ավելի քան երեք տարի, բայց նրան չեն թույլատրել զորացրվել: Ավելին՝ ադրբեջանական բանակում որոշակի տարածություններ կան բուն ադրբեջանցիների եւ Նախիջեւանցիների միջեւ: Որպես կանոն, Նախիջեւանցիներին ուղարկում են Ադրբեջան, իսկ ադրբեջանցիներին՝ Նախիջեւան, որպեսզի նվազագույնի հասցվի փախուստի հնարավորությունը զորամասերից: Մ. Նասիբովին իր անմիջական հրամանատարը պարբերաբար փորձել է ճնշումների ենթարկել, որովհետեւ ինքը Նախիջեւանցի չէ:

Իսկ Վագիֆ Թամմազովը պատմում է, որ իր անմիջական հրամանատարը զինվորներին սովորեցնում էր որոշակի աղբանոցներ ծախել գյուղերում եւ դրա դիմաց իրեն բերել սպիրտ ու օղի: Թամմազովը ծնվել է 1977 թվականին եւ ընդամենը նորակոչիկ էր ադրբեջանական բանակում: Նրան հրամանատարը նույնպես դաժանորեն ծեծել է, մարմինը մինչեւ հիմա էլ ցավում է, եւ հայ բժիշկներն են խնամում նրան:

Ի դեմ, ծեծի մասին գիտեն նաեւ Կարմիր խաչի ներկայացուցիչները, որոնք այցելել են խաղաբական ապաստան խնդրածներին: Ինչպես Նասիբովը, այնպես էլ Թամմազովը նրանց հավաստիացրել են, որ այստեղ՝ արգելափակման վայրում իրենց վիճակն ավելի լավ է, քան ադրբեջանական բանակում: Նրանց ե՛ւ ծխախոտ են տալիս, ե՛ւ անհրաժեշտ սնունդ:

Լրագրողներիս հետաքրքրությանը, թե արդյո՞ք իրենց սիրտն էն այդպես ասել, երկուսն էլ բացասական պատասխան տվեցին. ասում են այն, ինչ մտածում են, եւ ոչ ոք իրենց ոչինչ չի սիրել:

Իսկ ի՞նչ կուզենային ասել այժմ ադրբեջանական բանակում ծառայող իրենց ընկերներին: Նասիբովի ուղերձը նրանց հետեւյալն էր. պետք չէ կռվել: Իսկ Թամմազովն ասաց, որ չկա ավելի ավազակ մի ազգ, քան ադրբեջանցին, եւ ինքը երբեք չէր ցանկանա վերադառնալ Ադրբեջան: Ավելի լավ է մեռնի Հայաստանում: Վերջինս, ի դեմ, ոչ Թուրքիա գնալ է ցանկանում, եւ ոչ էլ Ռուսաստան: Նրա նպատակը Հայաստանում մնալն է: Իսկ Նասիբովը ազատություն ստանալուն պես մտադիր է մեկնել Ռուսաստան՝ Կրասնոդարի մարզ, ուր բնակվում է իր մեծ եղբայրը: Մինչեւ բանակ զորակոչվելն էլ Նասիբովը եղել է եղբոր մոտ, սակայն մոր առողջության պատճառով վերադարձել է Ադրբեջան եւ միանգամից զորակոչվել: Ի դեմ, վերջինս ադրբեջանական դիրքերը լքելիս կրակել է իր հետ ծառայողների վրա, որոնցից մեկը, նրա խոսքերով՝ զոհվել է, մյուսը՝ վիրավորվել:

Իսկ արդյո՞ք չեն կռվել հայերի դեմ: Մ.Նասիբովն ասում է՝ ոչ, ինքը ծառայել է կապի զորամասում եւ անգամ կռվելու առիթ չի ունեցել: Իսկ Թամմազովը բանակ է զորակոչվել հարաբերական խաղաղության ժամանակ: Նա այսօր էլ դեռեւս չի մոռացել կրծքավանդակի ցավը եւ ասում է՝ որտեղ էլ բռնի իրեն հարվածող սպային՝ Նադիր Անսալիեւին, սպանելու է:

Ադրբեջանական բանակում տիրող մթնոլորտի մասին վերջինս հետեւյալ պատկերացումը տվեց. սպայակազմն ասում է, որ պատերազմը կարելի է եւ չբարունակել, եթե հայերը վերադարձնեն ադրբեջանական հողերը, այդ ժամանակ մենք կարող ենք բարեկամություն անել, իսկ շարային զորակազմն ընդհանրապես դեմ է պատերազմին: Նա կարծում է նաեւ, որ պատերազմ չի լինելու շուտով: Իրենց բանակի սպառազինության մասին Թամմազովն ասաց, որ զորամասում ընդամենը երեք տանկ կար, որից մեկը՝ խափանված վիճակում: Իսկ Նասիբովի խոսքերով՝ ի գնդում ընդհանրապես ծանր սպառազինություն չկա: Ի դեմ, նա ծառայել է հետեւակային գնդում:

Այժմ թե ինչպիսի ընթացք ունի նրանց խաղաբական ապաստան տալու գործընթացը: Նասիբովը գրավոր դիմում է ներկայացրել համապատասխան խնդրանքով, իսկ Թամմազովը մտադիր է դա անել մոտ օրերս: Նրանք երկուսն էլ վստահ են, որ Հայաստանի իշխանությունները այդ հնարավորությունն իրենց կընծեռեն:

Ա. ՉԱԲԵՐՅԱՆ
«Երեւան» տեղեկատվական կենտրոն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ

Սեյսմիկ ճարտարագիտություն, արդյունաբերական ճարտարագիտություն, խաղաբագիտություն, գործարար ղեկավարում

Հայաստանի ամերիկյան համալսարանն սկսում է 1997-1998 ուսումնական տարվա դիմորդների փաստաթղթերի ընդունումը: Ընդունելությունը կազմակերպվում է արդյունաբերական ճարտարագիտություն, սեյսմիկ ճարտարագիտություն, գործարար ղեկավարում եւ խաղաբագիտություն մասնագիտությունների գծով:

Դիմորդները պետք է ունենան համապատասխան բնագավառի բարձրագույն կրթություն, խաղաբագիտական շինարարություն կամ մեխանիկա՝ սեյսմիկ ճարտարագիտության M.Eng աստիճանի համար, ճարտարագիտություն, մաթեմատիկա, մեխանիկա՝ արդյունաբերական ճարտարագիտության M.Eng աստիճանի համար, պատմություն, իրավագիտություն, լեզուներ կամ հասարակական գիտությունների այլ բնագավառներ՝ խաղաբագիտության MA աստիճանի համար, մաթեմատիկա, տնտեսագիտություն, ճարտարագիտություն՝ MBA աստիճանի համար:

Անգլերեն լեզվի լավ իմացությունը պարտադիր է:

Դիմորդները պետք է ներկայացնեն
1. Դիպլոմ եւ ներդիր իրենց պատճեններով
2. Երեք երաշխավորագիր-նամակ
3. Լրացնեն դիմում եւ ֆինանսական հնարավորությունների մասին տեղեկանք:

Փաստաթղթերի ընդունման համար կանխավճարը դրամով կազմում է ԱՄՆ 10 դոլարին համարժեք գումար, որը պետք է մուծել փաստաթղթերը հանձնելիս: Փաստաթղթերի ընդունման վերջին ժամկետը 1997 թ. մայիսի 2-ն է:

Բոլոր դիմորդները 1997 թ. մայիսի 6-ին կհանձնեն անգլերեն լեզվի իմացությունը գնահատող քննություն (բացառությամբ այն դիմորդների, որոնք վերջերս ստացել են TOEFL քննության 550 եւ ավելի միավորներ): Առաջին փուլով անցած այն դիմորդները, որոնք չեն բավարարի անգլերեն լեզվի իմացության պահանջված մակարդակը, կմասնակցեն 1997 թ. մայիսին ՀԱՀ-ում սկսվող անգլերեն լեզվի արագացված դասընթացին: Անգլերեն լեզվի արագացված դասընթացի ուսման վարձը կազմում է ԱՄՆ 300 դոլարին համարժեք գումար:

Հիմնական ծրագրում վերջնական ընդունելությունը կկատարվի դիպլոմի ներդիրի միջին ցուցանիշի, նախապատրաստական փուլում դիմորդների ցուցաբերած առաջադիմության եւ տվյալ ծրագրի համար անհրաժեշտ բնագավառի քննական արդյունքների հիման վրա (GMAT կամ GRE): Ուսման տեւողությունը հիմնական ծրագրի համար երկու տարի է: Հիմնական ծրագիր ընդունված բոլոր ուսանողները պետք է կրթության եւ գիտության նախարարության հետ ստորագրեն ավարտելուց հետո երեք տարի Հայաստանում մնալու եւ աշխատելու մասին պայմանագիր:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել ՀԱՀ-ի ընդունելության գրասենյակ: Հասցե՝ Մարշալ Բաղրամյան 40, առաջին հարկ, 19 սենյակ, հեռախոս՝ 27-16-29:

ՀԱՀ-ը ռասայական, կրոնական, սեռային կամ ազգային խտրականություն չի ճանաչում:

ԱՐՄԻՆԴ
ԿԵՆՏՐՈՆԸ

հայտնում է իր կողմից իրականացվող չարտերային չվերթների վերսկսման մասին:

Հրավիրում ենք զբոսաշրջիկներին եւ գործարար մարդկանց՝ տրյա չորս գծերի հետեւյալ չվերթներով

Երեւան - Դելի - Երեւան - 7 օր
Երեւան - Բանգոգ - Երեւան - 7 օր
Երեւան - Սինգապուր - Երեւան - 7 օր

Շրջագայությունների ընթացքում զբոսաշրջիկները կտեղավորվեն բարձրակարգ հյուրանոցներում (անուղղակի երկու անգամ): «Արմինդ»-ը կօգնի նաեւ առեւտրի կազմակերպման հարցերով:

Ուշադրություն ⇨ «Արմինդ» կենտրոնը գործարար մարդկանց առաջարկում է նաեւ ցածր գներով բեռների փոխադրում Երեւանից նշված ուղղություններով:

Չվերթները կկայանան մարտի 30-ին:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել՝ ⇨ Գյուլբենկյանի փող. 27
Հեռախոսներ՝ 27-67-11, 28-02-63

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
կիսակառույց
երկհարկանի տուն
Նոր Արեշ 31 փողոցում:
Հեռ. 45-59-99

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
2 սենյականոց բնակարան 5 հարկանի քարե տնի 1-ին հարկում, Դեմիրճյան 17 տնից:
Հեռախոսներ՝
58-18-41, 52-30-56

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
3 սենյականոց բնակարան
Նարի 5-րդ զանգվածում,
c. 17, բն. 9
հեռ.՝ 64-88-85 63-03-47

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
3 սենյականոց բնակարան, ավտոնստակով. Վրացական փողոցում:
ՀԵՌ՝ 25-11-87, 58-18-41

ՍՈՍ

The United Nations Development Programme in Armenia is seeking highly qualified specialists in economics, sociology, political science, environment and social issues. One specialist will be recruited for 6 months as a National Expert in each of the above disciplines.

The incumbents should have advanced university degree in their respective field. At least five years professional experience with broad exposure to cross-sectoral approaches important for national development; excellent knowledge of his/her own country; significant exposure to international discourse on human development issues, for instance through international conferences, advanced studies abroad, research and publications and/or international postings or work in international organisations; and experience in the formulation and execution of research and advisory projects related to specific aspects of national development.

Excellent communication skills, teamwork approach, excellent oral and written capabilities, proven planning and supervisory skills, creative approach in professional work, openness to new ideas and dialogue.

Excellent knowledge of Armenian, knowledge of English is highly desirable. Computer literacy is an advantage. Women candidates are encouraged to apply.

The interested candidates should complete P11 form (copy can be obtained from the guards at the UN building, 14 Karl Liebknecht) and submit an essay in English or Armenian (three pages maximum) with the following title: "Country Development in 1996". The deadline for applications is 5:00 p.m. March 28, 1997. The initial selection of the candidates will be done based on applications. Only selected candidates will be invited to an oral interview.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ուսանողական ցոկատների հանրապետական շաբաթ Կամավորական աշխատանքների ծառայությունը հայտարարում է մրցույթ եվրոպական երկրների եւ Հայաստանի աշխատանքի միջազգային ճամբարների ծրագրերին մասնակցելու համար:

Դիմումները ընդունվում են մինչեւ ա/թ ապրիլի 10-ը

Մրցույթի պայմանները՝
- Անգլերեն /իրանսերեն, գերմաներեն/ լեզվի տիրապետում
- Ուղեվարձի վճարման հնարավորություն

Հասցեն՝ Կորյունի 19ա, 7-րդ հարկ. հեռ.՝ 52-27-88, 52-27-01

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
- **3 սենյականոց բնակարան 5 հարկանի քարե տնի 5-րդ հարկում, 70/50 մ, ավտոնստակով: Հրայլա Քոչար 23 (նախկին Չեկի խանութի մոտ):**

Հեռախոս՝ 22-42-68

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Մարտի 21-ին, ժամը 15-ին, գրողների միության մեծ դահլիճում տեղի կունենա հուշ-երեկո նվիրված

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ

ծննդյան 120-ամյակին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
Առանձնատուն, 80 քառ. մ նկուղ-ավտոնստակով եւ երկու բնակելի հարկով (առանց ներքին հարդարանքի), «Չվարթնոց» կինոթատրոնի մոտակայքում (Մոնումենտ): Կա նաեւ մրգատու ծառերով փոքրիկ այգի:
Զանգահարել 27 22 57 ժամը 10-16, 58 33 26 ժամը 18-23

«ՍՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ - ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԻ ԵՎ ՊԱՅԱՆՋԱՐԿԻ ՄԱՍԻՆ ՀԵՌԱԽՈՍՈՎ: 589167, 581351

«Պարբերական» հրատարակչության տպարան, Երեւան-23, Արշակունեաց 2, Գրանցման թիվ 65, Դասակ 69149, Պատուեր 540, Տպաքանակ՝ 3000, Ստորագրված է տպագրության՝ 18.03.1997, Գինը՝ 100 դրամ

digitised by A.R.A.R.@